

Hon. Rédaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistengasse 4

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՍԿԻՆԻ

ԿԻՍՎՍՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

24^Ի ՏԱՐԻ

1894

ԹԻԻ 5



ԽՄԲԱԳԻՐ - ՏԵՕՐԷՆ

Մ. ՄԱՍԿԻՆԻԱՆ

ՉՄԻՌԵՆԻՍ

ՏԳՍ.ԳՐ. ՄԱՍԿԻՆԻԱՆ

Պ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Երես	
Ընթերցումը Մեր Մեջ	129	Մ. ՎԱՐՊԵՏԵԱՆ
Վեհամայրն	133	Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ
Իմ Մանկական Յիշատակներս	138	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Թե Ի՞նչ է Գեղեցիկը	142	Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ
Բարեկամը	145	Յ. Ս. ԴԻՄԱՔՍԵԱՆ
Ծաղկեայ Ժամացոյցը	146	ՍԱՆՆԻԿ
Արդի Նշանաւոր Երաժիշտները	147	Հ.
Կարծեաց Շարժում	150	ԽՄԲ.
Նոր Խնամակալութիւն	153	ԻՐՄԱ
Թեմական Գործեր (Մանչեսթր) (Նաշուէ)	155	ԽՄԲ. Կ. ԱՐԱՄ.
Արեւելեան Ակումբ	157	Վ.
Լրաբեր	158	ԽՄԲ.
Լրաբաղ	160	Հ.

Ա Ձ Դ

Այն բաժանորդներն որ Ա. ՄԱՄԼՈՅ
 թիւերն ժամանակին կամ բնաւ չեն ստանար,
 կ'ենդրուի որ հաճին անմիջապէս իմացնել
 յամբողջութեանս. հակառակ արարողայի մէջ,
 ու է գանդատ անընդունելի ու անլսելի պի-
 տի նկատուի:

Ս՝ ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿՔ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՑՈՒՆ

Սոյն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին զանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն իղմիրի ամեն հասարակութեանց համարումն, այլ և իր բոլոր դաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քաջ զնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիններու անհամեմատ չափաւարութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ մնացած և սոյն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ: Ընչպէս ցարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյ յաճախորդներուն, և յատկապէս դաւառայնոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց փրայ: Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին: Անտարակոյս դաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով փորձել, ապրանայ գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուին՝

Ա.Յ. - Եօրիէ Կոշտիէ Գոշտէն Տէժ Վեդեր Խան օւղի:

Անոնք որ կ'փափաքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցուած տեսնել, կ'անդրուին որ երկերիւս օրինակ խմբագրութեանս հասցնեն:

ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐՏՈՒՍԱԶ

(LA FRANCFORTOISE)

ՄՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՅՐԱՆՔՖՕՐՏ

Դրամադրուի ֆր. 6,250,000 Պահեստի դրամ 1,270,312 ֆր.

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգեհատով ուղարկելի ամեն ապրանք, ինչպէս և դրամածրար, և այլն դիւրամատչելի պայմաններով:

Գնոց և այլ ամեն տեղեկութեանց համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և շրջակայից. վե՛հա՛ն Ֆրեհա՛նէ,

ՅԱԿՈՒԲ Գ. ՎԷՄԵԱՆ

— Բարև, բարեկամ, ո՞ւրիկից կուգաս այդպէս խնդումներես

— Հէ՛, հէ՛, ինձ յանձնարարած դերձակէդ:

Ես որ յետին ծայր Բէ՛լիէ եմ, գիտես, դանգատելու բնաւ տեղի չունիմ այս անգամ:

Դեռ հիմա վրաս ըրաւ առաջին փորձը որ և վերջինը պիտի ըլլայ, որովհետև սքանչելի կերպով յաջողած է: Եւ որքան որ վերելքի սանդուխը ոլոր մուրը է և վայրը քիչ մը նեղուած, ես միշտ պիտի երթամ Պօղոս Աբրահամեանի և կը խրատեմ բո՛լ որ Իզմիրցի եղբայրներուս որ դիմեն ՄԻՇՏ

ՊՕՂՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՆԻՆ

Օսման Զարե Խան, վերէ յարէ, 37, Բեշարեմալըլար Պաշէ

Վ. ՍԻՏԻ — V. SIDİ

Մեծ կաղնատուն Բարիդեան և Անգլիական ճաշակով:
Ամենաընտիր կաղմ, Նուագատետրներու և Տուճարներու

ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐ

17, Պարպարեաթօ Խան, Ֆրանկաց լեալ

Անցեալ երկուշաբթի օրուանէ, 7/9 Մարտ, սկսեալ

Մ Ե Ծ Վ Ա Ջ Ա Ռ Ա Յ Ա Ն Դ Է Ս

նախկին Քօնթուար Բարեղիէնէ մնացած պատրաստ ապրանքներու, որ կը բաղկանայ զանազան կտորուանքներէ, մետաքսեղէնէ, բրդեղէնէ և բամպակեայ կտուակեղէններէ, գուլպայներէ, վարտիքներէ, փողպատներէ, շապիկներէ, թաշկինակներէ, ժապաւէններէ, շղարչ—քօղակներէ, և, և, և:

Չափազանցօրէն զեղջեալ գիներ

Աժանութիւն մեր բոլոր ճիւղերուն մէջ

Ուշադրութիւն.— Այս վաճառահանդէսի նպատակն է տեղ բանալ քիչ օրէն հասնելիք նորութիւններու և պիտի տեւէ Մի-Միւսն 20 օր: Կ'օգտուինք այս առթէն նաև իմացուներու համար մեր վայելչասէր յաճախորդուհիներուն թէ Տիպիւն ԹՕՄԱ-20 (ՄՆԵԱԼ ՈՐ ՄԻՇԼԻՆ ՊԻՅՐ) առաջին ձևող և կարող մեր չրջազգեստներու և նորածնութեանց սենեկին և ՕՐ ՄԱՐԻ ՔԱԼԼԻՍԻՅԻ առաջին փեղոյրադործուհի կարգուած են, երկուքն ալ հանրածանօթ և իրաւամբ գնահատեալ մեր քաղքի բարձր դասէն:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մ Ե Ծ Վ Ա Ջ Ա Ռ Ա Յ Ա Ն Դ Է Ս

(L'UNION)

ԱՊՈՒՋՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Բ Ե Հ Ի Դ Է Ս

Հիմնուելու 1828 ին

Ընկերական Իրաճախարհի և Պահեստի Ֆր. 82,000,000

ԻՒՆԻՕՆ սպաշովազրական ընկերութիւնն նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սակագինէն 30էն 50 0/0 զեղջ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմութիւն յաճախորդներուն և արգոյ հաստատութեան թէ պատրաստ է շնորհել յաւելումական 20 0/0 զեղջ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'ատանան իրենց սովորական 30 0/0 զեղջը ընելէ յետոյ:

ՃԱՆ Բ. ՊՕՍԿՈՎԻՉ
JEAN P. BOSCOWICH

Ընդհանուր Գործակալ Զմիւռեհոյ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Օ ԲՈԼԷՄՈՍ

(Օ ΠΟΛΕΜΟΣ)

ԵԿԷՔ ԱՍԵՆՔԴ ԱԼ ԱՅՑԵԼԵԼ
 ՄԵՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆԵՐԸ

ԿՐԿՆԱԿԻ ԳՈՇ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ՄԵՐ Ի ՎԱՃԱՌ ԴՐԱԾ ԱՊՐԱՆԱՅ
 ԸՆՏՐՈՒԹԵՆԷ

Ե Ի

ԴԻՆԵՐՈՒ ԱՆՀԱՌԱՏԱԼԻ

ԱՅԼ ՃԵՄԱՐԻՏ ԱԺԱՆՈՒԹԵՆԷՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ
ՉԱՐԵՀ ՇՆՈՐ ՀԱԻՈՐ

Հայոց Բաշ, Ռեշեթէ ճարտէ

Ամեն տեսակ դեղերու մեծ խնամօք պատրաստութիւն

Չափաւոր գիններ

Գաւառներէ եկած հիւանդներու ամեն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ դաւառները կը զրկուին:

ՄԵԾ ՆՊՍՐԱՎԱՃԱՌՍՏՈՒՆ

Դ. ԵՒ Լ. ԹԵՐԻՏՃԵԱՆ

Հայոց Չէժ Բաշ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անոյին ամեն տեսակ պարէն, ինչպէս՝ ալիւր, բրնձ, արդար եղ, շաքար, խաչուէ, ձէթ, մաքարօնի, սպուրի համար խմորեղէններ, պանիր, պիպուկներ, անուշեղէններ, գինի, քօնեակ, և այլն, և այլն և ամեն ինչ որոց պէտքը զգալի է ամեն տան և մանաւորաբար խոհանոցի մէջ:

Խիստ աժան և ամեն մրցում արհամարհող գիններ:

LIBRAIRIE FRANÇAISE & ANGLAISE

Կէլեւիլիէի Չրանկայ Բաշի ճար

Առ ու ծախ Չրանսերէն և Անգլիերէն գրքերու:

1500 հատորէ աւելի գրքեր վարձու կը տրուին:

Նաև կազմատուն ամեն տեսակ կազմերու՝ Չափաւոր գիններով:

Ո և է տեղեկութեանց համար դիմել առ

ՊՐՆ. ԿՍՏՊԷՆ

Ամեն անոնք կ'փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կազմեալ գրքեր ունենալ թող դիմեն, 1857է իվեր հաստատեալ, Էլմանկէլիքօն Յունաց դպրոցին անցքին մէջ թիւ 8

ԱՍՆ

ԱԹԱՆԱՍ ԱՆԿԷԼԻՏԻՍ

Պ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԳՐՐԵԱՏՈՒՆ

Հայոց Ռէֆորմացիոն, Ռեշիտէ ճարտէն, Ռէ-106

Սոյն տեղական դործատունս, որսորդաց վերաբերեալ կաշիէ, ձգտիէժէ և թէ՛ լաթէ ամեն տեսակ պէտքերու լաւագոյնը շինելու պատիւն ունի. ամենաազնիւ որսորդ մը իր քմահաճոյցիցը համեմատ ո և է խնդրանքի մը անմիջական պատրաստութեամբը մեծ դիւրութիւն պիտի գտնէ: Գաւառներէ ո և է խնդրանք կամ ջուջակ ամենայն ճշդութեամբ կը զրկուի: Մեր ձեռաց արտագրութիւնը ըլլալով ունինք նաև ճամբորդաց մեծ ու փոքր սնտուկներ, կանանց, դպրոցականաց, փաստաբանաց, գրագրաց, բազում տեսակներ, ծիծալլերու զանազան պայուսակներ, դրամի և սիկարէթի դրամագանակներ, թղթագանակ, զանազան դօտիներ, կապերտ պայուսակներ, և այլն, և այլն:

Յոյս մեծ ունիմք թէ, Յարգելի Ազգայինն՝ հայ գործատուն մը քաջալերելու ազնիւ զգացմամբ՝ իրենց պէտքը մեզմէ գոհացնելու պիտի բարեհաճին:

ԳՐԱՅՈՒՅՄԱԿ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՅ կազմեց ՎԱՀԱՆ Գ. ԶԱՐԳԱՐԵԱՆ Ա. Տարի 1893, Գին 40 դրշ. հրատարակած է Յունիարի տետրն ևս պատկերազարդ, Տարուան Բաժանորդագրութիւնն է, 40 դրշ. փոստի ծախքով 12: Հատը 1 դրշ. իսկ Վարժարանաց և Գրավաճառաց ձրի կը տրուի:

ԵՐԱՍԽԱՅՐԻՔ, բանաստեղծական և թատերական արձակ և տաղաչափեալ գրուածոց — Գրեց Գ. Մ ԷՕԼՄԷՉԵԱՆ, հրատարակիչ Պ. Պալենց Կ. Պօլիս. Չաքմաքճլար, թիւ 20. Բաժանորդագրին 5 դրշ. յետ տպագրութեան 7 50:

ԱՐԱՆՅ ՀԱՄԱՐ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Ջանադան կաշինքեր, ինչպէս՝ ԽԵԼԻ ԽԵՐԻ, ԲԵՒԼԻՆ, ԷԻԿԵ, ԿՈՍՏԱՆԻՆ, Եւ ամուսնան համար գունաւոր կաշինքեր:

Ոսնամաններու գինը պիտի որոշուի հագնողին ոտքին թուոյն համեմատ: Ահա ՆՈՒՈՒԹԻԻՆ մը որմէ օգտուել կը խրատուի մեր Պատ. Յաճախորդներուն և Արդոյ Հասարակութեան, որովհետև այս գրութեամբ՝

0/0 10-15 ՆՈՒԱԶ պիտի վճարեն:

ԳՆՅՈՅ

Թի- 40 Եւ ԳԵԼ 48	ՄԻՒՐԵ 33 Եւ
Կօշիկ Նուշակա կրկններբան	Թիւը գրշ 7
Կօշիկ ԲԵՒՆ »	» » 6
Պօթ իւրեւոր և իւրեւոր »	» » 3 25
Բօթին ու սուկաւոր (մանթարլը) »	» » 2 75
Պլուքէղ ու » »	» » 2 75
Կէս պլուքէղ և կէս պօթ »	» » 2 50
Աքարբին »	» » 2 37 1/2
Բօթին Կաւարլը »	» » 3 75

Միաներբանը վերի ցուցակին գիներէն 1/4 մեծիտ պակաս:

Ոսնամաններ ի հարկին 24 ժամէ կը յանձնուին:

Ամուսնան, դիմացկուծութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն:

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ

ԿԱՆԻԻԿ

Ս.Ե. ԵՇԵԻՆ ԵԿԵՂԵՅՆՅԻՆ ԴԺ ԴՐԱՆ ԺՈՒ, ԲԵՒ 47

ԱՄՃԱ ՊՕՂՈՍ Կ. ՕՋԱՆԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳՂԻԵՐԻՆԵՆԵՆԻ Ի ՀԱՅ ԵՐԵՎԱՆԵՅ Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ, Ամբողջ գործը փոխանակ 35ի որ խոստացուած էր՝ 45-47 թերթ պիտի լինի: Բաժանորդագինն է պարզ կազմ՝ 30 դրշ. լաթ. 35, կիսակաշի 40: Օտար երկրաց համար 7 և 8 Ֆր. յրանայէ յետոյ 40, 45 և 50 փութին ծախքը զնողին վրայ լինելով: Փափաքողք պարտին դիմել հրատարակչին, Զ. Թորոսեանի Պօլիս, Պահճէ. Գաբու, նոր բոստին գէտ, թիւ 4, ուր է միակ կեդրոնատեղին: Ա. Թերթն ձրի իբր նմուշ կը տրուի: Հրատարակուած է 35: Երթերին, Բաժանորդագրութիւնն ի մտոյ կը փակուի երբ 40: Երթերը հրատարակուի:

Գրպանի Բաւարան ՀԱՅ. ՅՐԱՆՍԵՐԻՆԵՆ (25000 ԲԱՌ) Ե. ՏԵՄԻՐ-ՃԻՊԱՇԵԱՆԻ հրատարակչէ Զարեհ Թորոսեան. Տպագր. Յ. Մատթէոսեան — Գին պարզ 45, լաթակազմ՝ 47 1/2, կիսակաշի 20:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Տ Ա Ր Ե Ց Ո Յ Ց

1 8 9 4

Տարուան

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Զ

ՆՇԱՆ Ս. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Կ. Պօլէս Լսոյի Զարդի Զարդի, Թի- 61

Այս գրաստի ու հետաքրքրաշարժ հատորն ունենալ լիալիա-
քողք կրնան դիմել Մամուրեան Տպարանն և Պ. Կարապետ
Գույումճեանի խանութն:


ԳԻՆ 6 դրուշ արծաթ

ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Սոյն Տպագրատան մէջ կը տպուին զա-
նազան գրութիւններ, դիրք, տեղեկագիր,
հաշուեգիր, տոմսակներ, և այլն և այլն:

Սոյնպիսի գործեր տպել տալու պէտք
ունեցող ազգայինք կը հրաւիրուին դիմել
Մամուրեան Տպագրատունն և անտարակոյս
գոհ պիտի ըլլան թէ տպագրութեան մաք-
րութեան և կանոնաւորութեան, թէ՛ թղթի
ընտրութեան և գիներու աննման չափաւո-
րութեան մասին:

Մամուրեան Տպագրատունն կը գտնուի
Ս. Մեսրոպեան վարժարանի կից:



ԹԳ. ՏԱՐԾ

Թ Ի Ի 5

15 Մ Ա Ր Տ 1891

ԸՆԹԵՐՅՈՒՄԸ ՄԵՐ ՄԷՋ

Հայ Ընթերցատունի Քսանհինգամեայ Յորեկանին օրը՝ Պ. Մամուրեան, իր փայլուն ատենախօսութեան մէջ՝ որ օրամիտ խօսակցութեան մը վստփուն գոյճն ալ ունէր, յիշեց մեր կիներու անընթերցախրութիւնը ու քննադատեց զայն: Ահա կենսական խնդիր մ'որու վրայ օրքան խօսուի կ'արժէ և որ՝ կարծեմ՝ գրեթէ անտես առնուած է մինչև հիմա, կամ շատ թեթև կերպով վիճուած:

Արդի ընկերական պայմանները կը պահանջեն որ կինը կարգայ, կրթական, բարոյական, մտաւորական, գրական շարժումներու քիչ շատ հմուտ ու երազելի լինի: Զի կարողալը պարզապէս ամօթ է կնոջ մը համար որ ընկերութեան մէջ շարժելու յաւակնութիւնը ունի, ու, քաղաքակրթութեան հասանքէն մղուած՝ կ'ապրի, կ'աշխատի, կ'ուտէ, կը հագուի, կը զուարճանայ ներկայ ճաշակին ու նորոյթներուն համեմատ

Մեր կիները կ'ընեն կ'ընդունին ինչ որ Արևմուտքն կուգայ մեզի, շատ անգամ անօգուտ, գէշն իսկ, բայց ցաւալի իրողութիւն մ'է որ չեն կարդար, շատ պղտիկ թիւ մը կը կազմեն բացառութիւնները. այս անընթերցասիրութիւնը ուրիշ կարևոր պատճառ մը չի կրնար ունենալ բայց միայն հին փառած սովորութիւն մ'որ ժպիտ ու ծաղր միայն կը գրգռէ մեր վրայ:

Մեր հանիներուն ներելի էր չի կարդալը, դպրոց տեսած չէն, մեր մայրերու՝ որ քիչ շատ ուսում առած կը սեպուին՝ ներելի չէ այս բանը, իսկ մեր քոյրերուն՝ բնա՛ւ, քանի որ արդի պահանջումներու համեմատ կը կրթուին, կարելի եղածին չափ:

Թերևս առարկուի « լա՛ւ, կիները չեն կարդար, հասա աչքերը . . . » կը պատասխանեմ — չէ՛, անոնք ալ չեն կարդար, ու յանցանքը կիներունն է: »

Ասկից զատ կան պարագաներ որ եթէ բոլորովին ներելի չեն ըներ այրերու անընթերցասիրութիւնը՝ գոնէ կը մեղմեն այդ յանցանքը: Տղայ մը պղտիկ տարիքէն կ'ստիպուի դպրոցէ հրաժարիլ, ընտանիքը ապրուստ ճարդի մը պէտք ունի. ի՞նչ ընէ խեղճը, ու այդ տղան որ շուկան կ'աշխատի ամբողջ օրը ինչպէս կ'ուզէ որ կարդայ երբ տուն վերադառնայ իրիկուան, յոգնած, խորտակուած, ու կարգացածին համը առնէ քանի որ անուս ալ կը սեպուի: Հացի, ընտանիքի հոգ ունեցող աղքատ կամ միջակ դասակարգերու անձերէ չի պահանջուիր որ իրենց ատենը կարդալով անցունեն ու գործը երեսի վրայ ձգեն, և սակայն ասոնց մէջ կը գտնուին այնպիսիներ որ լրագիր մը աչքէ անցունելու վայրկեան մը կը գտնեն, թէև իրենց դուրսը ամբողջ զիշերը, յաջորդ օրը ընելիք գործով գրադած ըլլայ, մինչդեռ անոնց կիները՝ դպրոցէն ետքը՝ թերևս զիրքի մը պատեանը չեն նայած ապահովապէս:

Գիտեմ որ աղքատ ու միջակ դասակարգերու վերաբերող կիները տունի աշխատութիւնը ունին որ շատ անգամ ծանր է, բայց քանի որ դուռը պատուհանը կենալով իրենց անձը ցցունելու կամ իրարու տուն երթալով շաղկապատելու ատեն կը գտնեն, կարդալու համար ալ կէս-մամ կարծեմ կարելի է գտնել:

Գալով այն դասակարգերուն որ ժամանակ ու միջոցներ ունին կարդալու և չեն կարդար, ոչ թէ սրբերուն՝ այլ՝ կը կըրկեն մ' կիներունն է յանցանքը:

Ան բացատրութիւնը դիւրին է, եթէ ընդունինք որ ընտանիքը կազմողը կինն է, տունին առանցքը՝ հոգին է կինը, չուտ կը համուզուինք ըսած իս որ թերևս քիչ մը տարօրինակ երևի: Ջուակ մը աւելի շատ իր մայրը քան իր հայրը կը տեսնէ մինչև տարիք մը զոր՝ եթէ կը ներուի՝ տղաւորութեան տարիքը պիտի կոչեմ, այսինքն այն տարիքը՝ ուր կ'ընէ կամ ընել կ'ուզէ ինչ որ կը տեսնէ, կ'ըսէ ինչ որ կը լսէ, կը հարցունէ ու նորէն կը հարցունէ երբ պատասխանը գոհ չընէր զինքը, վերջապէս առեն բան տղաւորութիւն մը կ'ընէ իր միտքին վրայ, ու փափաքներ կը ձգէ իր սիրտին մէջ, տարտամ փափաքներ՝ որ հետզհետէ կը շնչուին, կը զարգանան իր հասակին հետ, որոշ գոյներ կ'առնեն ու կ'իրանան ժամանակին. հետևաբար տղայ մը երբ կը տեսնէ թէ մայրը զիրք մը առեր կը կարդայ, բնականաբար պիտի հետաքրքրուի, պիտի հարցունէ թէ ի՞նչ է, ու կամայ կամայ բնական պիտի երևի իրեն այս բանը, նոյն խնդիրը պարծուի ազմուկ չընելու երբ սենեակին մէջ մէկը կը կարդայ, ու այսպէս պզտիկ հասակին մինչև տասնուչորս, տասնուվեց տարու երբ շարունակ տեսնէ թէ տունը կարգալու ժամեր կը նուիրեն, կը հարցունեմ, այդ տղան պիտի հետևի՞ իր մեծերու օրինակին թէ չէ: Տունը պէտք է ըլլայ տղայի մը առաջին դպրոցը և առաջին դաստիարակը՝ մայրը:

Թողլով որ կարող, հմուտ, փորձ զրիչներ մանրամասնօրէն քննեն, ուսումնասիրեն ու բացատրեն ընթերցումի բազմազան օգուտները, բարոյական ու նիւթական, պիտի աշխատիմ հոս քանի մը անձնական կարծիքներ յայտնել անցողաբար:

Աին մը կրնայ զանազան ճիւղերով օժտուած ըլլալ ու ամուսինը զբաւել իր համբերութեամբ, իր սիրով, իր առաքինութեամբ, իր գեղեցիկութեամբ, բայց այս բաները կը բաւեն: Ի՞չ ընեմ ես պէպէկ մը որ չի գիտէր խօսիլ, որու խօսակցութիւնը գուեհիկ տափակ նիւթերէ, խոհանոցէ, չըջաղեստէն անդին չանցնիր, փայլուն տեսքով աղւոր ծաղիկ մը որ կ'աճի ոսկի թաղարի մը մէջ, բայց հոտ չունի, ինչպէս ըսու Պ. Մամուրեան իր ատենաբանութեան մէջ:

Ան ճիշտ է, կը նախընտրեմ կին մը որ գիրք կը թղթատէ, կը խօսի, կը վիճի, կարծիք մը ունի, գաղափար մը կը յայտնէ քան կին մը որ Աօլթայֆելի մէկ վալսովը կը զուարճացնէ զիս, կին մը որ գիտէ Ախսթին մէկ սաբսօտին ճշգրէն ածել ու չի կրնար միտք հրատարակել երկու բառ քով քովի դնելով խօսիլ,

պարտէզ մ'է ուր վարդին ճիշդ քովը կ'աճի, բայց ներս-
ցէք, գո՛ւմը կ'զղամ որ բառս կոչո է, աւելի փափուկը չի
գասայ:

Պէտք է կարդալ, ինչպէս պէտք է աշխատիլ, ուտել, քնա-
նալ: Անթերցումը կ'աղնուացունէ սիրտը, կը զորացունէ հոգին
ու զազափարներու զանազանութեամբ մը կը լեցունէ միտքը
որով մարդերը և իրերը դատելու լայն սկզբունք մը, խորշելու,
տրամաբանելու ուղիղ եղանակ մը, և խօսելու կիրթ ճաշակ մը
կ'ստանանք, ու այս բաները կը բարձրացունեն մարդը, հրա-
պուրելի կ'ընեն կիներ:

Նորէն կը կրկնեմ, եթէ մեր այրերուն շատերը չեն կարդար,
կիներունն է յանցանքը, եթէ առնենք տասը ամիս որոց մէջէն
այրերը միայն կարդալէ ախորժին, չեմ կարծեր որ տասէն ե-
րեքը իրենց կիները ընթերցասէր ընելու յաջողին, մինչդեռ
կրնայ ըլլալ որ՝ այրերէն քանի մը հատը պաղին իրենց գիրքե-
րէն, բայց եթէ այդ դասը կիները կարդալէ համ առնեն, վըս-
տա՛հ եմ որ, անոնցմէ գոնէ կէսը, պիտի կրնան ընթերցասի-
րութեան մելելու իրենց այրերը, պայմանով որ բոլորովին տգէտ
չըլլան ասոնք, ու բնական է, մարդ մը որ կը յարգէ իր կինը ու
կ'ուզէ յարգուիլ անորմէ պիտի աշխատի ընելու այն բաները
որ հաճելի են իր կնոջ:

Երրորայի երկիրներու շատերուն մէջ ամենէ վեր դասա-
կարգերէն ամենէ վարերը, այր թէ կին, կը կարդան, ու ճիշդ՝
մարդ հաճո՛ք կ'զղայ տեսնելով կին մը որ՝ օրուան լուրերուն
տեղեակ՝ անոնց վրայ կը խօսի այնքան դիւրութեամբ որքան
չըճաղկեստ մը ձևելու, անուշեղին մը պատրաստելու վրայ,
կին մը որ կը հետաքրքրուի նոր երկի մը հրատարակութեամբ,
որ նպատաւոր կամ աննպատաւ կարծիք մը կը յայտնէ իր
կարդացած մէկ քննադատականին կամ որ և է գրութեան
վրայ:

Այն կարծիքէն չեմ սակայն որ ընթերցումը կը բառնայ
բամբաստանքը կամ աւելի ճիշդ՝ վայրահաչուութիւնը, որովհետեւ
բամբաստանքը կարծեմ պատուի արատ բերող խօսքեր կը նշա-
նակի, վաբահաչուութիւնը ամեն ժողուրդի մէջ և ամեն տեղ
կայ, վայրահաչուութիւնը մինչև մէկ աստիճան կեանքին աղն է,
մարդ սրբան ալ բարի ըլլայ կը սիրէ ուրիշ վրայ խօսիլ, ուրիշ
դօրձերով հետաքրքրուիլ, և, ըստ իս, քիչ, շատ քիչ են անոնք
որ ուրիշ մը ձախողուած էն անկեղծօրէն կ'զղածուին, նոյն իսկ

եթէ այդ ուրիշը բարեկամ ըլլայ, մտերիմ մը՝ եթէ կ'ուզէք, բայց ո՞վ կրնայ ժխտել թէ ընթերցումը ուրիշի գործերով գրադելու, ուրիշի վրայ թեր ու դէմ խօսելու ժամանակը կը քիչցունէ:

Վայրահաչու թիւնը պիտի բաժնեմ երկու տեսակի, վնասարեր վայրահաչու թիւն ու անվնաս՝ զոր՝ աւելի մեղմ բառով մը՝ Խօսու+ պիտի անուանեմ, այսինքն պարզապէս կը խօսին վրադառանց նպատակի, առանց վերադրելու, անմեղօրէն. բայց վնասարերը այն է որ թեր ու դէմ կը շաղակրատեն աւելցունելով, պարսաւելով, քաջքշելով, դատապարտելով, այս վերջին տեսակը ընդհանրացած է դժբաղդարար հայոց մէջ, հիւանդութիւն մը եղած որ եթէ չի բուժուիր, կը դարմանուի, և անոր կարևոր ու ազդու դարմաններէն մէկն է ընթերցումը:

Ուստի կարդանք, Տիկիներ, ու մշակենք, լայնէնք մեր դազափարները:

Փետրվար

ՄԻՆԵՐԻՆ ԱՍԻՐՈՅՏԵԱՆ

Վ Ե Շ Ա Մ Ա Յ Ր Ն

Անո՛նք միայն, որոնք սքանչելի մայր մը կորուսած են ժամանակէն առաջ, անոնք միայն կրնան զնահատել Խստեան եղբարց երջանկութիւնն, որոնց մայրը կ'ապրի դեռ, անծեր, խրախոյս տալով իւր զաւակաց ու թոռանց, օրինակ տալով մարց ու բոլոր կանանց:

Չենք կրնար ըսել թէ Տիկին Աննա Խստեան, ի կեսարիա ծնած, կոստանդնուպոլսոյ Հայ տիկնանց պարտի խր գործօն ոգին: Այդ ոգին յանգլայոս գոյացած չէ յինքն, իւր սեռին աշխոյժ և անձնուէր անհատից ներգործութեամբ. խարուսիկ ու վաղանցուկ հոգեկան զորութիւն մը չէ ա՛յն, որ մրցանաց դաշտին մէջ այդ աւելոր կիներ երիտասարդագոյններէն հզօր կը հանդիսացնէ. ո՛չ ալ հիւանդ հոգւոյ մը տենդն է իւր գործունէութիւնն, առանց շորժառիթի, առանց նպատակի: Աքանչե-

լայկէս հաւատարակչուած մտքի մ'ու կատարելագոյնս առողջ հոգւոյ մը սէտքն և արդիւնքն է այն անձնուիրութիւնն, որով Հայ իգական սեռին մէջ կը փայլի Տիկին Կոստան: Ընդունած է կ'ող վեհ կոչումն, որ զայն ընտանեկան յարկին կը կապէ՝ ցոր-քան իւր զաւակունք իւր խնամոց կարօտին, և որ զայն ընկալ-ձակագոյն յարկաց աակ կը հրաւիրէ՝ ուր ազգին զաւակունք խնամակալութեան կարօտին: Երկրորդ մարտութիւն մը պարտի սկսիլ մօր մը համար, որ այլ ևս ինքնուրոյն ապրելու և ապրե-ցնելու կարող ըրած է իւր զաւակունքն: Այդ երկրորդ մայրու-թիւնն համարժէք է քրմութեան՝ սուրբ ու բարձր պաշտօն մ'է այն՝ որուն ամեն կին պէտք է թեկնածու լինի և ջանայ կատա-րել զայն կարողութեան չափով:

Կրնանք իրաւամբ մեծ քրմուհի նկատել Կոստան եղբարց չքնաղ մայրն: այնքան աւելի մեծ իրաւամբ, որքան չէ նա ծնած Մայրաքաղաքիս մէջ, որքան չէ բարձրագոյն կրթութիւն մը ստացած վարժատան մը կամ իւր տան մէջ, որքան չէ կարողա-ցած Եւրոպացի և Ամերիկացի հոգեկաւոր կանանց կենսագ-րութիւնն՝ որոնք գթութեան ազրիւր կամ լուսաւորութեան վառարան հանդիսացած են իրենց երկրին մէջ: Ի մի բան, ո՛չ ստացիլ կարողութիւն ո՛չ արտաքին ազդեցիկ գրգիւ կազմած են այն հազուադիւտ անձնաւորութիւնն, որ Մայրաքաղաքիս առաջին թաղին Հայ ընկերութեան հոգին է, այդ ընկերու-թեան ուղեղն ըլլալով այսօր բազմափշուտ Տիկին Տիւսար փաշա, և անոր թեւն ըլլալով Սիպիլ:

Այդ մեծափարթամ ու մեծազու թաղին մէջ՝ ուր Հայու-հեաց ձեռքերն և ստքերն անընդհատ կը շարժին թղթասեղա-նին վրայ ու պարասրահին մէջ, Տիկին Աննա՝ իր թիկնաթոսին վրայ բազմած մտախոհ՝ ի խորոց հոգւոյն հառաչանքներ կը հա-նէ քանզի չէ կարող դրիչ շարժել Հայ ժողովրդեան մէջ առողջ բարոյականի գաղափարներ ծաւալելու համար, յորդորելու հա-մար Հայ տիկիններն որպէս զի մանկանց դաստիարակութեան ու թուաւորութեան ամբաստ վեհ գործին նուիրեն իրենց ոսկի ժա-մերն՝ ոչք գորդերու ու թաւիշներու վրայէն կը սահին կ'երթան անհետ անօգուտ: Կարգալ կուտայ, կը կարգայ օրագիրներն, ուր կը պատմուի թէ՛ մեծահարուստ Անկուհի մը իւր ծախքով անտէր ազբաւ տուց պատասպարան կոնգնած է իր հսկողու-թեան ներքև, թէ Ամերիկացի միլիօնատէրի մը կինն իւր քսա-կէն մանկապարտկղ մը բացած է՝ յորում պարտիպանուհւոյ

պաշտօնն ինքն իսկ կը կատարէ: Միայն ծովն^օր, միայն նիւթա-
կա^օն անդունդներ կը բաժնեն — կը հարցնէ արտօնութեամբ
մարդասէր Հայ Տիկինն ինքնին — Հայ ընկերութիւնն Եւրոպեան
և Ամերիկեան ընկերութիւններէն. այն կիներն ալ հարուստ
են, ու մեզի^օ պէս հարուստ, և սակայն իրենց կեանքն որքա՛ն
կը տարբերի մերինէն. ի՛նչ դատարկութիւն մեր հողւոյն մէջ,
և անոնց հողւոյն մէջ ի՛նչ անհունութիւն. կանոջ սեղանին
վրայ հեղուած սակւոյն հոճոյքէն որքա՛ն գերազանց է խար-
սեալ գլխի՛լի մը վրայ կաթած արատասուաց կաթիլին հա-
ճոյքն . . . :

Եւ առաւօտուն, Կստեանց մայրն Հասցիւզ է: Հսն դեռ
կեանք կայ, որովհետեւ աղքատութիւն կայ. Ներսէս չը կա՛յ
այլ ևս, սակայն Ս. Ներսէսեան վարժարան կայ. Ճէզայիրի
բարերար Ամիրան ո՛չ ևս է ի Հասցիւզ, այլ ի Հասցիւզ՝
թէ և որչա՛սական՝ կ'ալորի բարերարին բարերարն, Արծրունի
քահանան՝ որ վարժարանին շինութեան ու պայծառութեան
պահպանման համար թելադիր եղած է Մկրտիչ Ամիրալին.
Նուպար-Շահնազարեան վարժարանն հողին հաւատար եղած
է հոն, այլ դէ՛մ այդ հողն անմահ Շահնազարեան վարդա-
պետին ոսկերքը կը պահէ: Հսն է առաւօտուն Յովհաննէս
ու Մկրտիչ կրթակէր եղբարց անզուգական մայրն, ի Հասցիւզ,
իր սիրական թաղն: «Հասցիւզցիները շատ կը սիրեմ:» Ե՛հ,
ի՞նչպէ՛ս չը սիրես, պատուական մայր. Հասցիւզցիներն աղքատ
են, այլ հարուստներուն՝ աստուածոց նման՝ անմահութիւն
կուտան: Տիկին Աննա կ'այցելէ Ս. Ներսէսեան վարժարանն
աղջկանց, որոց Խնամակալուհեաց Ժողովոյն Ատենապետութիւ-
նըն ընդունելու պատիւն ըրած է Հասցիւզցոց, կամ պատիւն
առած է Հասցիւզցիներէն՝ կ'ըսենք մենք զոռոյ Հասցիւզցի-
ներս: Կ'այցելէ վարժարանն, որու վերաշինութեան համար ար-
դէն երկու հարիւր յիսուն ոսկի հանգանակած է՝ զպրօցին
կրթական պիտոյիցն համար տարեկան կարևոր գումար մը նուի-
րելէ զսա. — Ս. Ներսէսեան վարժարանն այժմէն վերաշինուած
կրնանք համարել, քանի որ նայնքան գումար մ'ալ Կստեան
որդիք ու թոսունք անտարակոյս չը պիտի զլանան. Եղեա Շահ-
պալ և Խնճիճեան եղբարք իրենք ալ երկու հարիւր յիսունս-
կան ոսկի առ նուազն պիտի տան. Հասցիւզցի մը չը պիտի
դանուի որ իր ամենէն նուիրական պարտքը չը համարի Նիլ-
սէսեան վարժարանին վերաշինութեան համար իրեն ընկած

բամինը տալ: Թաղէն դուրս, Պէրպլըեան՝ այդ գտրոցին սլան-
 ծախ սանն՝ իւր հարուստ գրքատունը պիտի վաճառէր իր բա-
 րոյական որրանին վերաշինութեան նպաստելու համար. իսկ
 պատուականն Նարինեան՝ որ ակամայ հեռացած է Հասգիւղէն՝
 շուկայ շուկայ պիտի պտտէր հանգանակելու համար, պիտի մու-
 րար Ս. Ներսէսեան վարժարանին համար՝ որ ժամանակին Աեղ-
 րոնական վարժարանն եղած է: — Տիկին Էստեան կ'այցելէ՝
 կ'ըսենք՝ աղջկանց վարժարանն, և հոն պակաս մը կը զգայ:
 Պակասութիւնն ա՛յն աղջկանց, ոյք թաղին մէջ օտար յարկ մը
 կը յաճախեն դաստիարակութեան համար: Այդ պակասութիւ-
 նըն, երեք տասնեակ Ս. Ներսէսեան սանուհեաց բացակայու-
 թիւնն, յաւէտ զգալի է. սակայն Տիկին Աննաի նշմարած պա-
 կասն ուրիշ է. փոքրիկ աղջկունք ձեռունին զիրք ունին՝ փո-
 խանակ խաղալիքի: Արթութեան այդ եղանակն այժմ դատա-
 պարտուած չէ՝ միթէ. մանուկ մը ժամերով անշարժ մնալ իր
 կողտ նստարանին վրայ, աչուկները միշտ միևնոյն առարկային
 վրայ, միագոյն միօրինակ զրքին վրայ, գաղափարապատկերներէ
 հանուած այն կմախային դասերուն վրայ՝ որոնք բնաւ չեն խօ-
 սիր մատաղ էակին զգայարանաց: Ա՛չ, ասիկայ աղէկ չէ, կը գո-
 չէ նորոգամիտ կրթասէր բարեսիրտ Տիկինն: Այլ Տիկին Էստ-
 եան Աեսարացի է. Յսանգլին եթէ Ամերիկա չը ծնէր, անշուշտ
 Աեսարիա պիտի ծնէր. Տիկին Էստեան չուզեր աղջկանց վար-
 ժարանին ընտելարանն իրր մոզութեամբ մանկապարտէզի փո-
 խարկուած տեսնել. Յո՛ր յո՛ր, որպէս բնութիւնը կ'ընթանայ,
 որպէս բարեչըջական իմաստասիրութիւնը կը սահանջէ: Մեր
 մանկանց իմաստուն բարերարուհին Ս. Ներսէսեան վարժարանի
 ընտելարանին առ այժմ կը խոստանայ նորածն նստարաններ
 ու տարրական խաղալիքներ. թաղն ունի պարտիզպանուհի
 Այն անձնուէր ու խղճամիտ թաղական խորհրդականն՝ Պետրոս
 էֆէնտի Փափաղեան՝ Բերայի մանկապարտէզը գացած, իր ձե-
 ոօք նստարաններու չափն առած ու շինել տուած է անձայն
 անչչուկ, Հօգարտրձուններն իսկ չիմացած. ու Ծննդեան տօնին
 յաջորդ կիրակին հաւատացեալք եկեղեցւոյ բանկային առջև
 տեսնելով այդ մանրպիտական զբասեղաններն, իրենց կը
 թուի թէ . . սուրբ ատաղձագործն իր աստուածային նորածին
 որդւոյն ու մանուկ Յովհաննէս Մկրտիչին համար չի՛ած ըլլայ
 զանոնք:

Աւ ահա թէ ի՛նչ հաճոյք կայ բարեգործութեան մէջ: Դոյզն նիւթական զոհողութեամբ — այլ մեծ բարոյական հոգածութեամբ — բովանդակ թաղ մը, բովանդակ մանկութիւն մը բերկրացնելու հաճոյքն սրգարեւ անփոխարինելի բան է:

Աւ միայն երախտագիտութեան արտայայտութեան հաճոյքը կը հաւասարի բարեգործութեան հոգեկեցոյց հաճոյքին:

Ե. ՏԷՄԻՐՃԻՊՍՇԵԱՆ

Խմբագրութեանս հրաւերին վրայ՝ մեծանուն գրագէտ՝ Ե. Էֆ. Տէմիրճիպաշեան՝ կ'հաճի մերթ ընդ մերթ մեզ աշխատակցիլ: Իր աշխատակցութիւնն այնքան աւելի գնահատելի է որքան որ ժամանակէ մ'ի վեր փայլուն Գրատե՞րն տրամուխեան ամպերու մէջ ամփոփուած՝ ուր ուրեմն իր կայծերը կ'արձակէր օրագրական գրականութեան վրայ: Անտարտիդոս մեր ընթերցողները մեծ հաճոյքով կ'կարդան իր իմաստալից յօդուածներն միայն յաւ է մեզ յայտնել որ, Բարձրագոյն կրթութեան Հաստատարածին լի առաջին մասը տեսանք: Այս ընդհատման պատճառը հարցնելով զարմանօք իմացանք որ հեղինակը չէ կրցեր իր քննադատական ուսումնասիրութիւնը շարունակել կեդրոնական վարժարանի վրայ եւ միւս մասերն ևս մեզ ուղարկել, իր բոլոր ջանից հակառակ, անկարող լինելով ձեռք ձգել այն գաղտնական Բարձրագոյն (documents) որ կարեւոր են իր քննադատականին: Տարակոյս չունինք որ կեդրոնական վարժարանի վարչութիւնն, և մասնաւորապէս՝ իր լուսավոր Տեսուչն՝ Մոստիշեան Էֆէնտի, որ քննադատութեան օգուտներուն քով խելամուտ է, պիտի փութայ գոհ ընել մեր Գրատե՞րն փափաքն հայթայթելով այն գրաւոր միջոյցներն որ անհրաժեշտ են անոր ուսումնասիրութիւնն ի կատար հանելու:

ԻՍ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

Ժ Գ

Միծաղն ու զուարճութիւնն ա'յնքան անմեռ և անբաժան յատկութիւն մ'է մատաղ հասակի՝ որ ամենէ սմբիչ սպարադաներու մէջ անգամ, ինչպէս է վանեցի Շահինեան պատուելիի նման խիստ դաստիարակի մ'երկաթեայ ծանր գաւազանը, անարգել և անզուսպ կը յայտնէ ինքզինք մերթ դայթակղելի ցոյցերով, ինչպէս սուրբերես տունկ մ'որ չոր և ամուռ հողի վըրայ և ամենէ աննպաստ պայմաններու մէջ խակ դուրս կը պոռթկայ անհամբեր՝ ամենափոքր շողէ կամ ցոյէ կեանք առած:

Շահինեան պատուելիի պահ մը դուրս ելած միջոցին ծիծաղասէր մանկտին — կատուի բացակայութենէ ազատութիւն գտնող միտնք — կը խունի միմոսի մը շուրջ՝ որ ծանօթ էր իր ծաղրածութեամբ, ստիպողապէս հրաւէր կարդալով անոր անվախ քաջութեան իրենց վարժապետը՝ ահարկու վարժապետը ձեռացնել՝ քանի մը վայրկեանի կարճ բացակայութենէ մ'օղուտ քաղերով: Պատուելիին մուշտակը՝ բազմոցի վրայ մնացած՝ թեւազիր առիթն եղած էր այս խօս և յանդուզն խորհուրդի: Այս մ'անձնատրտութեան խնդիր — պէտք չէ վախկոտ երեւալ վտանդէ՝ որքան և իրապէս մեծ ըլլայ այն — կէսէ տակի ալ միմոսական անդիմադրելի բերում, այս առաջարկը փոքր վարանումէ ետք՝ ընդունիլ կուտան խեղկատակ բզէզին: Վերջնական որոշումն ըրած՝ վրան կ'անցունէ Շահինեան պատուելիի մուշտակը, այն դու առիւծի մաշկեակն՝ որ իր հասակին համար խիստ երկար՝ գետինները կը քսուէր, և անոր գործածած քրթատուելի տեղ որ և է տուի մը ձեռքն առած՝ կ'երթայ փառաւորապէս իր վարժապետի բազմոցը կը նստի՝ անոր ձեռն առնելով: Առաջարկ, յանձնառում, ներկայացման պատրաստութիւնք բաւական ժամանակ զբաւած էին սակայն: Հազիւ ձեւացումը սխտած՝ այսինքն քթախոտի գործածումը միմոսաբար նմանցնելու համար, հազիւ հազ տուիք բացած իր ձեռքերու մէջ, ահարկու վարժապետին դուրսը՝ Մէղիւզի գլխին նման

քաննելի և քարացուցիչ՝ կ'երևնայ ահա սրահի սեամի վրայ: Պատուելին՝ ամենի ու կատաղի՝ արագ և մեծաքայլ կը յառաջանայ դէպի ուսանող ժպիրհը: Զայն տեսնելով՝ սարսափահար պատանին ոտք կ'ելնէ լեղապատառ և՛ տուփը դետինը նետած այլ մուշտակը միշտ իր վրայ — քանզի իր յետին տազնապի մէջ նիւթապէս չուռնէր ժամանակ յանցանքի նշանը վրայէն հանելու — կը փութայ փախչիլ իրեն մօտեցող վարժապետին առջևէն: Մուլեզին հալածում մ'է կ'սիսի վրէժ խնդիր պատուելի կողմէ: Աշակերտը խօս արաւուով իր դահճին առջևէն կը փախչի շարունակ, գրասեղաններու նրբանցքներէ սրանալով, անոնց վրայէն ցատքըտելով, անոնց տակէն սողալով սողոսկելով մուշտակը միշտ իր վրայ՝ որ կը պատուուէր՝ որ կը բզքուէր և իր ծուկններէն կտորներ կ'ձգէր ամեն մէկ գրասեղանի տակ: Աերջապէս որսը կ'իյնայ կատաղի հալածչի ձեռք: Այն օրն ութ տասն պատժելիներու պատրաստ խումբ մը կար արգէն: Ընդհանուր ականջսեղմութի ձևը կը տնօրինուի: Եահինեան սլատուելիի քինառու մաղիլներն բնականապէս բաժին կ'իյնան յանդուզն ծաղրածուի խեղճ ականջներուն, որոց կրած ցաւը նմանը չտեսնուած սաստիւթեան աստիճանի մը կը հասնի: Արքուտ պատուելին իր վիրաւոր արժանապատուութեան հետ միանգամայն և իր քրճքճուն մուշտակի վրէժը կը լուծէր: Պատժաւոր խումբն՝ իր սեղմուած ականջներէ առաջնորդուած՝ նոյն օրը աւելի քան երբէք երկար և օձապոյոյտ շրջաններ ըրաւ ընդարձակ սրահին մէջ: Այլ սակայն թէ ի՞նչպէս Եահինեան պատուելի միահամուռ Փալախայի պատիժ չունօրինեց ընդհանուր աշակերտաց համար՝ անբացատրելի պարագայ մ'է յիրաւի:

Խօս միմտարանութիւն մ'ալ արձանագրենք այսպիսի ընդհանուր ականջսեղմութի մ'աւթիւ ըսուած: Պատժաւորներու խումբին մէջ ամենէ վերջինը՝ նոյնպէս խեղկատակին մէկը՝ իր թափուր և անպոչոտօն մնացած եղունգներու համար գործ՝ այսինքն սեղմելիք ականջ կը փնտռէ և՛ « վարժապետ, ես ալ քու կինդ բռնեմ » կը յանդգնի ըսել ահարկու պատուելիին: « Հինգաղբերներու » ամենէ ահուելին կ'իջնէ իսկոյն լիբր միմտին երեսին վրայ, իր անվայել յանդուսութեան արժանաւոր պատիժ:

ԺԵ

Եահինեան վարժապետի չարաչար վարմանց մասին եթէ մեզմէջ պարագայ մը կայ, եթէ « նկարագիր » յայտնող պատ-

ուաքեր յիշատակութիւն մը կրնայ ըլլալ իրեն համար՝ այն բացարձակ անխորութիւնն էր՝ զոր «թնթլոչ» սլառուելիի այդ անցիւտ զոյգը կը ցուցնէր թէ՛ հարուստի և թէ՛ աղքատի նըկատմամբ, առաքինութիւն՝ զոր ի գործ զնելու համար չէ թէ միայն չափազանց անաչառ ըլլալ պէտք էր՝ այլ նաև քիչ շատ անկախ ոգւոյ և խիզախ բնաւորութեան տէր մէկը՝ որ միանգամայն չէ կարող՝ նոյն իսկ պաշտօնը կորուսելու վտանգով՝ զսպել իր բուն կիրքը: Մեծը՝ հարուստը պաշտել նոյն իսկ հիմայ կայ, ո՛ւր մնաց հին բարի ժամանակներ՝ ուր ջոջի մ'աղդէցութիւնը կարող էր ամեն բանի:

Շահինեան պատուելիի արտակարգ անգթութեանց մասին մտիկ ընե՛նք հին յիշատակարան մը: Անդրանի և վատահելի վըկայ մ'է որ կը խօսի: Գրուածքը զբաբառ է, ինչ որ կը ցուցնէ համեմատական հնութիւն մը, և կը կրէ հետեւեալ խորագիրը. Յիշարարան Գրիտար անցից Չփառնից սիւտալ ի 1845 ափ Յնիւ 1890: Այնպիսի ժամանակներու մէջ ի գիր առնուած է այն ուր ամէն տեսակ երկ՝ նոյնիսկ ընտանի սեռի պատկանողը — ինչպէս է անձնական յիշատակներ — գրաբառ կը յօրինուէր՝ եթէ չէր խորհուեր այդ հին ու անգործածական լեզուով: Յիշատակարանին հեղինակը նոյն ինքն աչակերտ մ'է Շահինեան պատուելիի, Պարոն Ստեփան Չաքրեան, վաղեմի վարժապետ Խլիբի երկսեռ վարժարանաց, և որ մինչև հիմայ իր պաշտօնը կը վարէ: Հեղինակի խաղաղ ու հեղահամբոյր ոգին քաջայայտ է ամենուն. որ և է մէկը թշնամանել — և ձրիաբար թշնամանել — չկայ իր բարուց և սովորութից մէջ: Եթէ հարկ ըլլայ գովել՝ կը դրուատէ յօժարակամ, այլ ինչ որ պարսուելի կամ գէթ քննադատելի է, ստէպ նախադաս կը համարի անցնիլ ներողամիտ լուծեամբ:

Ահաւասիկ այդ զբաբառ յիշատակարանի տողերը: Ոճի պարզութիւնը Անդրէաս վարժապետը կը յիշցնէ՝ որու վաղեմի և սիրելի աչակերտներէն է Չաքրեան: Փափաքելի էր որ օր մը տսյագրութեան բաղդի արժանանար այդ երկը՝ որ բաւական շահեկան յիշատակներ կը քրքրէ:

«Նոյն և կարի խտաբարոյ և ցասկոտ գողով նորա՝ ի ըսպառնալիս և ի գանս աներեկէր զաչակերտս, որք յաւէտ առ ահի ուսանէին զդասն քան առ ճաչակի ուսման: Զականջս աչակերտաց այնչափ յոյժ սեղմէր մատամբք և քարչէր՝ մինչև առ սաստիկ ցաւոցն բարձրաձայն աղաղակ բառնալ աչակերտին և

նուազիլ անդ. և իրր ի բազումս առ սաստիկ սեղմելոյ զունին նորաբոյս աշակերտաց՝ չարաչար վերաւորէր զայն: Սոյն այս արհամարհելի թերութիւն դասատուիս շարժառիթ եկաց բազմիցս մեծի յանդիմանութեան ի վերատեսչաց վարժարանին:»

Մահինեան պատուելիի դրական արժանեաց վրայ զովեստով կը խօսի Չաքրեանի յիշատակարանը, իսկ անոր ուսուցման եղանակի կը նուիրէ քանի մը տողեր՝ որք արժանի են խորունկ ուշադրութեան, և զորս արտագրելու փորձութեան չենք կրնաք դիմագրել՝ թէ և չեղանք մ'ըլլայ այն մեր խօսքի կարգէն:

«Այր քաջահմուտ հայ դպրութեան և քերթող* , որոյ յուր վազոյն քերթուածք զայլ և այլ նիւթոց գտանի յօրագրի Արշալուսոյ Արարատեան (ի 1848 և 46 ամի) : Յոտս հայկաբանութեան դասատու իս սկիզբն արարի քերականութեան, այլ ներեսցի ինձ անաչառապէս չթարուցանել զճշմարտութիւնն՝ (կ'ըսէ Չաքրեանի զգոյշ գրիչը) զի եղանակք ուսուցչութեան նորա ոչ լաւագոյն գոյով և ոչ ըստ այժմու պայմանաց դիւրիմանալի, որ աշակերտէրն առ նա, հաշեաւ արեմն է վեց ամս (կ'ըստ տորագծենք այս վերջին տողը) աւարտեալ նորա զբերականութեան՝ ատակ ինէր իմանալ զպարզ գրաբան:»

Ի՞նչ կ'ըսես, սիրելի ընթերցող, վեց ամբողջ արբի ուսուցչութեան րականական ընթացքի մը վրայ: Վե՛ց տարի. դպրոցական ամբողջ ընթացք մ'ըսել է այս՝ որ կը խամբի կը փճանայ: Ահա՛ քու դործդ, ո՛ր հին մանկավարժութիւն, որու ամուլ մէթոտներն ամբողջ սերունդներու միտքեր սպաննած է: Միւս կողմէ՛ ի՞նչ արդիւնք ներելի էր սպասել վարժապետէ մ'որ իր բարբարոս ընթացքով սարսափ միայն կ'ազդէր դասարանի մէջ, և որու աշակերտք «յաւէտ առ ահի ուսանէին զգասն՝ քան առ ճաշակի ուսման» ինչպէս կը վկայէ անտիպ յիշատակարանը:

«Վեց ասրուան քերականութեան ընթացք մը» զոր Չաքրեանի արժանահաւատ վկայութիւնը կ'հաստատէ և որ երկար խորհրդածութեանց ուշագրաւ նիւթ մը կ'ըլլար, մեր ընթերցողներու ուշիմ դիտողութեան յանձնելով՝ կը դառնանք մեր խօսքի:

(Շարունակելի)

ՄԵՆՄՐՈՂ ՆՈՒՊԵՐՅԱՆՆ

* Հին ժամանակներ խիստ տման զին ուներ «էերթոյ» անունը՝ որ անխափը կըշտայուէր ամէն ստանաւորողի:

ԹԷ Ի՞ՆՉ Է ԳԵՂԵՑԻԿԸ

Թերևս գիտնալ կարծէք թէ ի՞նչ է գեղեցիկը . թէ ո՞վ է գեղեցիկը . մինչև իսկ թերևս կարծէք թէ գեղեցկի մասին ձեր ունեցած խտեալն ամէն մտորոց ալ իտեալն է : Այլ կարծէք թէ ի՞նչ որ գեղեցիկ երևի ձեզ , օրինակի համար , հագուստ մը , նկար մը , կահաւորում մը զորս զմայլմամբ կը դիտէք , գիրք մը որ արցունքներ կը խլէ ձեզմէ և կամ թէ ձեր սիրուհւոյն դէմքը , ասոնք ամէնքս ալ այլոց սիրտը գրաւե՞ն նոյն աստիճանաւ : Ո՛հ , ո՛չ . մէկը ամենքս ալ գեղեցկագիտութեան մասին մտաց սա անձկութիւնն ունինք թէ գեղեցկութեան համար մէկ չափ , մէկ կէնտ կայ , գոր մտորդ իւր մէջ կը գտնէ և ընդհանուրին համար ալ ընդունելի կը դատէ :

Այն գէմքը որչա՛կ սիրահարէք , այն սլառիկը որ սքանչազման բացաւ գանչութիւն մը կը խլէ ձեզմէ , պատճառ կ'ըլլայ շատ անդամ որ ձեր բարեկամուհին կամ քոյրը — որ անտարբերութեամբ ձեր մօտ կեցած է — զարմանայ ձեր ճաշակ չունենալուն վրայ : Ուրիշ պարագայի մը մէջ ալ , դուք ձեր մէկ բարեկամին զարմացումը , սքանչացումը անտեղի , անըմբռնելի կը դատէք . և վերջապէս , կը զգտք , թէ և ուշ , թէ ամէն սք գեղեցկի մասին իւր սեպհական մտատիպարն ունի , թէ առ այդ մասնաւոր չափ աւ կը խնչի կայ , գտնէ . . . մտորկային մարմնոյ համար :

Միևնոյն ցեղէ , միևնոյն աղգէ և ընտանիքէ երկու անձանց մէջ գրտնուած գեղեցկութիւնն զգալու և զայն երևակայել կարենալու համար տարբերութեան զօրուոր աստիճան մը կայ արդէն . իսկ երկու օտար ազգաց պատկանող երկու անձանց մէջ գտնուած գեղեցկութեան տարբերութիւնը առաւել զգալի է , մանաւանդ թէ այդ պարագային մէջ գեղեցկութեանց արդեցութիւնն ալ կը նուտղի : Գիտեցէք , գերման մանկամարդ ուխարտեալ կոյսն , որու վրայ կը սքանչանաք , նոյն արդեցութիւնը կ'ընէ՞ ուրիշ ազգէ եղծող անձի մը վրայ . գաղեացի մը զայն գեղեցիկ կը համարէ՞ . և դուք փոխադարձաբար , գաղիացի կ'սոջ համար կը զգա՞ք նոյն սիրելութիւնը : Իսկ դարձ անգղիացի կ'սոջ , անոր խօսքն ամենէին չէք ընէր և միշտ անհրապոյր կը դատէք զայն : Իսկ անգղիացի այր մը . . . անպէս և գրեթէ անմօրուս . . . ո՛հ , Աստուած իմ , հա՞րկ է զայն նկարել . . . կը անանեմ որ ծիծաղել կը սկսէք : Բայց , ո՛չ , մտածեցէք թէ նա ալ սէր և կերք կը յուզէ , իւր միջավայրին մէջ : Եւ որչափ տարբերի կիւման , միջավայրը , երկիրը այնչափ կը մեծնայ գեղեցկի գաղափարին ասարեքութիւնը : Յեղադրանական տեսակետով երբ յառաջ երթանք , աւելի դիւրաւ կը համարուինք :

Տարլին կը պատմէ թէ Ափրիկէի շատ տեղերու ընտիկիք իրենց մազերը զանազան գոյներով կը ներկեն . նոյնպէս նաև իրենց ակռաները սև , կարմիր , կապոյտ կը ներկեն : Մալայեան Արշիպէղագոսի բնիկք կ'ամբնան երբ մտոր « շան պէս » սպիտակ ակռաներ ունենայ :

Հիւսիսային բևեռական երկիրներէն դէպ ի հարու , մինչև Նոր Զելանդա չի կայ երկիր մը որու բնիկք զանազան գոյներով չի կռեն իրենց

մարմնները : Հին Հրեայք և հին Երեսանիացիք ևս կը հետևեին այդ սովորութեան : Արաքական երկրաց մէջ գեղեցկութիւնը կատարեալ չի համարուիր երբ սյտերն ու բուռները ջրուած չ'ըլլան : Սոսկալի տեսարան , սյուպէս չէ . . . մեզ համար սահայն :

Հումայօլթ կ'ըսէ թէ հարաւային Ամերիկայի մէջ մայր մը պատժոյ արժանի անհոգութիւն մ'ըրած կը համարուի եթէ իւր զաւկին զիտները , արուեստական միջոցաւ , երկրին մէջ ընդունելի եղած ձևին չի նմանեցունէ :

Ինչպէս որ մեր մէջ դիտուորապէս դէմքն է որու գեղեցկութեանը վրայ կը սքանչանանք , վայրենաց մէջ ալ նոյնպէս դէմքով է որ կը դնահատուի գեղեցկութիւնը : Եւրոպայի մէջ ականջն է զոր ծակելով օդեր , աղամանդներ և զարդեր կը կահեն . վայրենի երկրաց մէջ քիթն է զոր կը ծակեն և օդերով , փետուրներով և ուրիշ նիւթերով կը զարդարին : Պօթօբուսանէրու յեղին մէջ ստորին շուրթին վրայ սյնպիսի մեծ ծակ մը կը բանան ուր կարելի է մնցունել փայտեայ 4 մատ սկաւառակ մը : Կեդրոնական Աֆրիկէի մէջ կանայք ստորին շուրթը կը ծակեն և բիւրեղի կտոր մը կանցունեն , որով խօսակցութեան ատեն լեզուին շարժման պատճառաւ յոյժ ծիծաղելի շարժում մը յառաջ կուգայ : Տորվին կը պատեն նաև թէ դէպ ի հարաւ , Մաքալոյի բնիկներու մէջ վերնաշուրթը ծակելով պամպուէ կամ մատղէ շինուած , բէլէլ կոչուած , օղակ մը կ'անցունեն և այս պատճառաւ շրթունքն քիթ ծայրէն երկու մատ դուրս ջցուելով , կնոջ ծիծաղելու ատենը , շրթանց մ'անունքներու ձգտումը մինչև աչքերը կ'հասնի :

Կանայք ինչպէս համար կը կրեն սյդ օղակը , հարցուած է ցեղապետին , և նա սյսպիսի տխմար հարցման մը վրայ չափազանց զարմանալով , ըսած է . — « Գեղեցկանալու համար : Ասոնք են սյն միակ գեղեցիկ իրերը զոր ունին մեր կանայք : » Թիւ անհաւատալի բայց ճշմարիտ է սյս : Ճաշակի վրայ վիճելը աւելորդ է :

Տեսէք , ամերիկացի հնդիկն ինչ զարգափար ունի գեղեցկութեան վրայ : Երկարախոյն Հէքնէ , որ շատ տարիներ անոնց մէջ ապրած է , սապէս կը նկարագրէ սյնտեղի բնիկներուն գեղեցկութիւնը . « անոնք ունին լայն ու տափակ դէմք , մանր աչք , ջցուած սյտեր , ցած ճակատ , մեծ ու լայն ծնօտ , արժուական խոշոր քիթ և գեղնագործ մորթ : Եւ ուրիշ բան ունենալ չեն ուզեր , վասն զի բնելու բան չէ մնացած : »

Բալլաս , որ սյցելած է Չինաստանի հիւսիսային երկիրները կը գրէ թէ անդ ա՛յն կիներն յարգի են , որոնց դէմքը լայն ու ջցուած , քիթը տափակ , և ականջն ալ մեծ է :

Վօկ դետել կուտայ թէ աչաց շեղ դերքը որ յատուկ է չինացոց և ճարնցոց , իրենց նկարներուն մէջ , ինչպէս կը տեսնենք , ա՛յն նպատակաւ կը չափազանցեն , որպէս զի շիկահեր բարբարոսաց աչքերուն նոյն դերքէն զանազանուի :

Քալմուկացի վայրենաց համար տափակ գլուխը գեղեցկութեան ամենն էական մէկ մասն է : Փարսկուսյի հնդիկները արմատաքի կը խլեն իրենց յօնքերն ու արուսանունքը , և ատոր ալ պատճառը , կ'ըսեն թէ ձիերու նմանիլ չուզենին է :

Չինացիք , իրեն , չափազանց մանր ոտներ ունին , և բարձր կարգի բնասանաց կիներն իրենց մանր ոտներն աւելի պարփկցունելու կամ չի մեծ ցունելու համար սեղմեալ կը պահան զայն :

Վերին Նեղոսի բնիկք իրենց չքոս կորոզ-ակոտները քաշել հանել կուտան և կ'ըսեն թէ անասունի տեսք չունենալու համար է որ սյդպէս կ'ընեն: Հարաւային մասին մէջ ալ Պարաքօսք (Գօնիօ) ասոնց օրինակին կը հետեւին սա տարբերութեամբ որ ասոնք միայն վերին երկու կորոզ-ակոտները կը հանեն, որով, ինչպէս դիտել կուտայ Լիվինկոսօն, ասորին կողմը դուրս իյնալով դէմքը ագեզ տեսք մը կ'առնու: Ընդհակառակն, Ափրիկէի զանազան մասերուն և Մալլայեան արշիպելագոսի մէջ ալ բնիկք խարտոցով կը սրեն իրենց ակոտները կամ կը ծակեն և փոքրիկ զարդեր կը խօթեն անոնց մէջ:

Գլխու մազերու համար զանազան երկրաց մէջ տարբեր խնամքներ կան: Տեղ կայ ուր մազերն ամենեւին չեն կտրեր և կը թողնեն որ մեծնան, այնպէս որ շատ անգամ մինչև գետինը կը հասնին: Տեղ ալ կայ ուր խիտ և զանգուրեալ դէօսի ձևով կը հիւսեն զոյնս. և սյդ մեծ զարդ մ'է որով կը հպարտանան, կը սոնքան փափուսք (Նոր-Ղուինէա):

Հիւսիսային Ափրիկէի մէջ մարդ 8-10 տարուան պէտք ունի իւր մազերուն արդուզարդն կատարելու համար. մինչդեռ վերին Նեղոսի արաք կանայք երեք օրուան մէջ հազիւ կրնան կարգադրել իրենց մազերը: Այս պարագային մէջ, չըսե՞նք թէ քաղաքակիրթ աշխարհի կրներն իբրև ունայնասեր մեղադրողը յանցաւոր կ'ըլլայ:

Ճանապարհորդն Գոյղ կ'ըսէ թէ Ճարոնցի կանայք շատ կը խրտչին մեր ծնօտամօրուքներէ. կ'ըսեն եղեր թէ շատ ագեզ բաներ են ասոնք. և խորհուրդ կուտան եղեր զայնս կտրել և ճարոնցի արանց նմանիլ:

Շատ սխալ է նաև կարծել թէ վայրենիք կ'ախորժին մեր դիմաց սպիտակ գոյնէն: Չինացիք արդէն ի ներքուստ կ'ատեն սպիտակամորթ եւրոպացիները և յառաջակարկառ քիթ ունեցողները: Ուրիշ ճամբորդ մ'ալ կ'ըսէ թէ խափշիկները առաջին անգամ սպիտակամորթ մը տեսած ատենին զոլուանք և դարչում կը զգան:

Նուպիացիք այնպէս կը համարեն թէ մորթի սպիտակութիւնը սխալում մ'է, պակաս մ'է, յոյժ անվայելուչ երևոյթ մը: Արևելեան եզերաց խափշիկ տղայք Պուսթօն ճանապարհորդն տեսած ատենին ասպէս աղաղակած են. «տէս, սա սպիտակ մարդը, ճերմակ կապիկի չի՞ նմանիր:»

Սիրոյ մէջ ինքզինքը դժբաղդ համարած՝ անծ մը պատմած է Տարվինի թէ իւր մորթին սպիտակութեանը պատճառաւ ո՛չ մէկ ազնիկ չէր ուզած ամուսնանալ իրեն հետ:

Զուլուի թագաւորին մէկ տխրումն ալ սա՛ է. «Դուք Տեր, Դուք որ աս էք . . . »

Տիկին Քիթայիլեր իւր մէկ գրութեանը մէջ կը պատմէ թէ Ճարոնցի գեղեղագոյն (բաց ս'չ թէ դալիահար) ազնիկ մը գեղեցկութեան տկար կը համարուի անդ: Իսկ ընդհակառակն ասորին Նիկիլի մէջ սպիտակամորթք պաշտուելու չափ չափազանց կը յարգուին:

Այսչափ մանրամասնութիւններէն ետքը հետաքրքրական է գիտնալ նաև թէ եւրոպացի մը երկար ատեն սյդ օտար ցեղերու և սևամորթերու մէջ անցունելէ ետքը վերստին իւր հայրենիքը դարձած ատեն ի՞նչ կը զգայ:

Տըթ. Ռիչարտ Պիթնէր քր ըտզմիցս ճամբորդած է յԱփրիկէ, վերջին անգամ Գոնիօյի մէջ բազմամենայ բնակութենէ վերադարձին, շատ անըրնայն և հիւանդային գտած է իւր ընտանեաց և ծանօթներուն դէմքը:

քաղց աղմամբ տնն սև կամ թխադէմ՝ ու առողջ վայրենիներուն որք շար-
ունակ կիզիչ արեւու և հողմոյ տակ կ'ապրին :

Այս ճշմարտութիւնները լսելէ ետքը կարելի՞ է բսել թէ գեղեցկին
գաղափարը միեւնոյն է ամեն մարդու համար, թէ ճաշակը և գեղեցկու-
թիւնը միեւնոյն չափն ու կշիւք ունին : Սնտարակոյս ո՛չ :

Ուրեմն, պէտք չէ ծանրանալ այլոց ճաշակին և խեղային վրայ :

Թարգմ. է Գեորգիանցիէն

Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ը

առ. Կ. Պ.

Պայծառ, այլ տխուր, շատ տխուր մէկ օր,
Թախժուրիւնն սրտիս պատեր էր ի խոր.
Ելայ պտոյտի, ման եկայ դաշտեր,
Քաղցեցի սիրուն երիւնէրդ ծաղիկներ.

Սակայն ոեւ. քախժմն սրտիս մէջ տիրէ :

Թողուցի դաշտը, նստայ մի նաւակ,
Սանեցայ բռայ այեակէ այեակ.
Մէկ կողմէն գեփիւռն կը շնչէր ճակտիս,
Եւ բարձրէն արեւն քափանցէր սրտիս.

Այլ տխուր քախժմն կազր եւ մնայր յիս :

Սեռ, ամենի մի նծոյց նստայ,
Եւ մտրակ ի կուշտ անդրէն սլացայ.
Թոջնոյ պես՝ արագ ըրի շրջաններ,
Յեռ կոյս քոյլով նորեր ու յեռներ.

Բայց սրտիս քախժմն ջ'եր քոյսը զիս դեռ :

Փոքրացի գացի մի գբօսավայր,
Ուր նուագիւն Պէրովն, Մօցար.
Հեշտայուր նուագը ոգեւորիւն,
Ունկնդիլք ամեն զուարթ գործիւն.

Սակայն դեռ տիրու իմ քախժմ սրտին :

Այսպէս յուսանաւ, տխուր, քախտալից,
Այց էլի անդևն եղբօրս սրտակից-
Բարեկամն էր այն, սիրուն անճնուէր,
Ոյր շրքնէն բռած մի քանի խօսքեր
Սրտես վանեցին ի բաց քախտներ:

20 Յունվար 1894
Վատը-Քեոյ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ԳԻՄՆԱՅԱՆ

Ծ Ա Ղ Կ Ե Ա Յ Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Յ Ո

Ծաղիկներ կան որոնք միայն օրուան որոշեալ ժամերուն կը բացուին որով կարելի է կազմել տեսակ մը « ծաղիկայ ժամացոյց: » Յոսանայի ժիրօնտ նահանգին և չրջակայից մէջ դիտուած է որ,

Քօշմորուքը (Salsifis) իր ծաղիկը կը բանայ առաւօտեան ժամը	4 ին
Կրէպիտը (Crévide)	5 ին
Գոշին (Scorsonère)	6 ին
Նուշուֆարը	7 ին
Վայրի եղերգը (Chicorée sauvage)	8 ին
Էբէրվենին (Piloselle)	9 ին
Աւաղուկը (Sabline rouge)	10 ին
Փրփրեմը (Pourpier)	11 ին
Իսկ պարարտ բուսոց մեծագոյն մասը	կէս օրին

Նմանապէս հետեւեալ ծաղիկներն կը գոցուին կէս օրէն յետոյ որոշեալ ժամերուն.

Բաղմաթերթ մեխակը կը գոցուի կէս օրէն յետոյ ժամը	1 ին
Թորաթտաը (Pulmonaire)	2 ին
Դաշտի վաղենիկը (Souci des champs)	3 ին
Սիպեխը (Epervière des Savoyards)	5 ին
Շէկ Արփիագեղը (Héméroëaille fauve)	8 ին

Սակայն կան նաև գիւերային ծաղիկներ: Գիւերագեղը իր ծաղիկները կը բանայ երեկոյեան ժամը 6էն — 8ը և Տաթուրան սրտակն մեծագոյն ծաւալ մը կուսնենայ ժամը 9ին:

Հակրան բնաբանը տեսած է վաղենիկներ որոնք կէս օրէն մինչև ժամը մէկի միջոցները մանր կայծեր կ'արձակեն, միևնոյն երևոյթը զննեց նաև Քրիստինէ Լիսնէ՝ Ուրսալի նշանաւոր ստացապետին աղջիկը: Եթէ բռնկակ (fraxinelle) կոչուած սունկին վառուած ճրագ մը մօտեցնենք իսկոյն իր շուրջը գըտնուող օղը կը բոցավառի: Գիւերուան կամ փոթ որկին մօտե-

նայուն Տաթուրաին տերևները թորչումած կը կախուին իրենց ցողունին վրայ: Այս երևոյթներէն անոնք որ բուսոց ննջման կը վերաբերին պիտի վերագրենք լուսոյ բացակայութեան, քանի որ արուեստական մթութեան մէջ ալ միևնոյն երևոյթները կարելի է յառաջ բերել, բայց միւսները կարելի չ'է արդեօք վերագրել տեսակ մը ելեքտրականութեան որ միայն բուսոյ յատուկ է: Այս կարծիքն աւելի շատ հաւանականութիւն կը դնէ երբ դիտենք որ թէ մետաքսեայ ձեռնոցով և թէ մերկ ձեռքով Զգայնիկին դաշելով միևնոյն երևոյթը կը տեսնենք:

Թարգ

ՄԱՆՆԻՆ

ԱՐԴԻ ՆՇԱՆԱԻՈՐ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

ՎԷՐՏԻ. — Կուսօի մահը կ'ստիպէ մեզ նայիլ մեր չուրջն և փնտուել երաժիշտներ որ կարող են իրենց գործով բացուած խրամատը գոցել: Թերևս ճշմարտ է ըսել որ ներկայ ժամանակս չ'կայ կենդանի նուագայարդար մ'որ կարող լինի նոր երաժշտական գործով մը նոր թուական մը բանալ:

Վէրտի տակաւին վատահութեամբ կ'սօսի իր նոր օբեքայնն վրայ: Նա ութսուն տարեկան է և հաւանական չեբեիր որ պիտի յաջողի ծնիլ ուրիշ Դբօշարօբէ կամ Դբաֆարա մը: Եթէ յաջողի անգամ, միթէ այդպիսի գործի մ'օրն չ'է անցած: Այդ օրէրաներն այժմ կ'ապրին, վասն զի նպաստաւոր ժամանակ մը ծնան և ժողովրդեան համակրանքը զբաւեցին:

Վէրտի առաջին նուագարանն եղաւ հին փետրահար մը (spinet): Իր Սան Ակադաի սիրուն գիւղատան գոհարներէն մին է այն, որ այս արձանագիրն ունի. — « Ես Սյեֆանօ կալվալէդ նորողեցի այս փետրահարն, և այս ըրի առանց ո և է վճարման ակնկալութեամբ, այդ նորոգութիւնն ըրի, վասն զի գնահատեցի Ժիուզէրբէ Վէրտի տաղանդն, որ ինձ համար բաւական մեծ գոհունակութիւն մ'է: Յամի Տեառն 1811: »

Այս պատանեակին տաղանդն հարուստ նպարավաճառի մ'ուրջ զբաւեց: Նա իր խանութն առաւ զինք և թոյլ տուաւ

որ իր դաշնակը գործածէ: Վէրտի այդ նպարավաճառին տղջկան հետ ամուսնանալէն ետև՝ իր աներն Պուսէղօի քաղաքապետն յորդորեց որ Վէրտիի վեց հարիւր Ֆրանք նուիրեն որպէս զի Միլան գնալով իր ուսմունքը շարունակէ: Միլանի երաժշտական դպրոցին մէջ ծաղու նշաւակ եղաւ Վէրտի և ոչ ոք ուղեց անոր դաս տալ:

Սակայն Լավինեօ անուն նուազ սյարդար մը հող տարաւ անոր դաստիարակութեան: Վէց ամիս ետք՝ Վէրտի վարեց Հայտնի Աքսըլաբոն-Ռենէ կտոր մը և շատ զովեաւ ստացաւ: Իսկոյն նա սկսաւ նուազներ յորդարել: Սալիբօ, նորափ բանահիւս մը, գրեց իր առաջին թատրագրերն (Libretto): Օպերաքծն լոյս տեսնելէն ետև՝ Վէրտիի կիսնն ու զաւակները մեռան և ժամանակ մը սլոյսարհէ հեռու կ'սպրէր և բնաւ չէր աշխատեր:

Սյուհեան Վէրտի նորէն երևան իլաւ իր Նեպոստոլոսաբ գործովն, զոր ներկայացուցին ի Լա Սքալա: Վէրտի սիրեց անուանի բրիտ քծնան՝ Սղբբօլի, որ Ապիկելի մասն երգեց, և անոր հետ ամուսնացաւ: Նշանաւոր երաժիշտն յաջողութիւն յաջողութեան վրայ և հարստութիւն և հսչակ կ'ստանար: Իրարու յաջորդեցին Ռիչիշտրօ, Դրօշտօրէ և Դրալիտա: Այս վերջինը գրեց Տիւմայի Գալիլեալաբ Տիլլին անունելէ ետև: Երբ բաւական տարիներ հանգիստ վայելելէ ետև՝ Օքելլօն լոյս հանեց, ժողովարդը կարծեց թէ Վէրտի իր գործն աւարտած է, բայց Պալաքի երևան եկաւ, և այժմ կ'սօսի նա յաջորդ գործին վրայ:

ՄԱՍԲԱՆՆԻ. — Գալլալեբիս Ռոստիտանի յաջողութեանէ ետք՝ Մասքանեի մեծ հոչակ հանեց և կ'կարծուէր թէ երաժիշտն հետզհետէ այնպիսի օրերաներ պիտի գրէր որոց նորութեան համբաւն անցնելէ ետև իսկ՝ շարունակ պիտի ներկայացուէին: Ժողովրդեան զաւակ մ'է և Մասքանեի: Երաժշտական հանճարն երբէք զրուանի ներքև թագուն մնալու սահմանուած չէ, և նա տակաւին տասնեօթ տարու չէր երբ երկու նուազներ յորդարեց որ տեսարան ելան Երաժշտատէր ընկերութեան միջոցաւ ի Լէկօրն, ուր իր հայրը մտավաճառ մ'էր:

Էդ օարքօ Սօնծօրնիօ, Միլանի երաժշտական հրատարակիչ մը՝ 1888 Յուլիս ամսուն, հրաւէր կարդաց այն ամեն նորափ խտալացի երաժիշտներուն որ տակաւին օրէրա մը զրած չէին, իրեն ներկայել մի արարով օրէրա մը՝ լաւագոյնին երեք հարար իր ժրցանակ խոստանալով: Հինգ հոգիէ բաղկացած քըննիչ մասնախումբ մը պիտի քննէր ներկայելի օրերաններն և

ընտրելագոյնը Հոռոմի նշանաւոր մի թատրոնի մէջ պիտի ներկայացուէր: Անմիջապէս Գալալէի Ռոսսիտան մրցանակի արժանի դատուեցաւ և մեծ հռչակ հանեց. Այնուհետև ամեն մարդ սկսաւ խօսիլ Մասքանեիի վրայ և զոնազան պատմութիւններ հնարել: Ետեր կ'հաւատային որ նա ազայ մ'էր. օրէրա մը գրած էր առանց երբէք հատ մը տեսած լինելու, առանց ո և է պատրաստութիւն ունենալու:

Մասքանեի դեռատի է — հաղիւ քսան ինն տարեկան — սակայն Միլանի երաժշտարանի աստիճանաւոր մ'է և կարող է նուագախմբի մը մէջ ամեն նուագարան անել: Ետ իշխանապետական է և իր օրերաներն մանրակրկիտ ուշադրութեամբ կ'ընէ: Երաժշտութեան արուեստական ճիւղին շատ հմուտ է և ամեն օրերաները կ'յաճայէ: Նուագայարդար մ'իւր վերջին է Ռոսսիտո օրերային համար ըսաւ՝ թէ յաջողութեամբ կրնայ ներկայացուիլ այն եթէ միայն ինքն, հեղինակն անսարան հանէ:

Մասքանեիի գործին մէջ՝ Վէրաիի նման ներդաշնակութիւն կ'տիրէ, մինչդեռ իր երաժշտութիւնն ունի իր յատուկ փայլութիւնն ու նկարագիրն: Էսպէս նոր երաժիշտ մ'է: Ընկերասէր երիտասարդ մ'է Մասքանեի, իր ծանօթներուն հետ դիւրահաղորդ և գրեթէ ամեն իրիկուն Գորնէլիո սրճարանը կ'դիմէ, ուր կ'խօսի ամեն բանի վրայ, ամեն բարեկամի հետ: Իր մտերիմն է արմատական թերթի մը խմբագիրն: Թէև յանկարծ մեծ անուն ստացաւ Մասքանեի, բայց միշտ մի և նոյն պարզասէր և բարեսիրտ անձը մնաց:

Արիկո Պօիո առաջին կարգի իտալացի թատերագիրն է, ինչպէս նաև ճարտարագոյն նուագայարդար մը: Նա դրեց Ծալլաֆի և Օթելլօ համար և կ'փափաքի որ իր համրան մնայ իր հանրածանօթ Մեքսիկոֆելս օրերային հետ: Նա ունի մեծ օրերա մը՝ Ներս, կիսկտտար և Խոալացիք կարծեն թէ մեծ հռչակ պիտի հանէ այն երրոր աւարտի և ներկայացուի:

(Մնացեալն յաջորդ բուով)

4.

ԿԱՐԾԵԱՅ ՇԱՐԺՈՒԾ

ԾԱՆՐԱՐԵՌՆԱԾ ՈՒՂԵՂՆԵՐ

Ինչպէս հրատապ պապակ մ'անցնելու համար սառնազին աղբիւրէ մ'անդազ ար խմելն իր վտանգն ունի, նոյնպէս ունի իրն՝ ուսմանց ու գիտութեանց օվիչանին մէջ անդուլ սուղելով ուղեղի գեղեղային եռանդին յագուրդ տալու աւելջն: Մին Ֆիլիքական դործողութեանց՝ միւսն հոգեկան կարողութեանց բնական ընթացքը կ'վրդովէ: Այս ճշմարտութիւնը նոր չէ, և վերջերս մի շատ ձեռնհաս զլուսններ ի նկատի առնելով այն մանկավարժական դրութիւնն որով ուսանողներու ուղիզ սաստիկ կ'ճնշուէր գիտական բազմազան ծանօթութեանց բեռին ներքև, բողբ բարձին և Ֆիլիքական դաստիարակութեան կարևորութեան վրայ երկար տեսութիւններ գրեցին: Այս բողբներն անխելի չանցան, մանաւանդ ի Ֆրանսա. որ հինգ տաս տարի առաջ մանկան ոչ այնքան մարմնոյն որքան իմացականութեան զարգացմամբ զրադած էր: Հետզհետէ մարդական այլ և այլ հիմնարկութիւններ հաստատուելէ զստ՝ հանրային վարժարաններու մէջ դպրոցական արշաւներ, խաղեր, ցամաքային ու ծովային վարժութիւններ պարտաւորիչ բնութիւն մ'ստացան ի Ֆրանսա և մտային յառաջոցման իրրև հական պայման նկատուեցաւ Ֆիլիքական ոյժերու կանոնաւոր և դաշնակաւոր մարդանքը: Թէև անգլիական դաստիարակութեան մէջ մարմնամարդութիւնը վաղուց կարևոր տեղ մը բռնած է, թէև հասարակային դպրոցներու մէջ օրէ օր մարմնային չարքալութեան նոր և թերևս քիչ մը չափէն աւելի ոյժ կ'արուի, սակայն ահա նորէն գանդատներ կ'լսուին համալսարանական նոր զեղծման մը դէմ: Այդ զեղծումն կ'գտնուի քննութեանց ծրագիրներու մէջ, որով ուսանողներու ուղեղն անչափս կ'ճանրաբեռնի, կը ճգնուի քննելի ծանր ու կնճառս առարկայից ներքև:

Մի նշանաւոր բողբարկուն է Սըր Պ. Վ. Ռիչարտսըն, որ համալսարանական քնննութեան մը ներկայ գտնուելով՝ զարմանահար կ'մնայ երբ կ'զխտէ ծրագրին պարունակած բազմազան

նիւթերն, որոց մի հատը միայն, կ'ըսէ, մանրակրկիտ խուզարկութիւն և բաւական երկար ժամանակ կ'պահանջէ որպէս զի հիմնապէս ուսմանսիրուի: Եւ այս կարծիքն յայտնողն ձեռնհաս հեղինակութիւն մ'է: Եւ կ'նկարագրէ թէ այդ ծրագրին ամեն կէտերուն յարմար և ուղիղ պատասխաններ պատրաստելու համար մրցակից ուսանողներն որքան տքնած մաշած են, ակներև կ'տեսնուի իրենց դէմքին տենդային այլայլութենէ և սրտի յուզմունքէն: Ի՞նչ տաժանեւի և անօգուտ աշխատութիւն: Եթէ Ֆէրատէլի, Սէքֆընսընի, Ֆէրիուսընի, Հընդըրի, Նիւթընի, Շէքսպիրի և Պէլընի պէս մարդիկ, կ'ըսէ Ռիչարտսըն, այդ տանջանքէն անցնելին, թերևս լիովին գիտական ու գրական ասպարէզէն զղուանօք պիտի քաշուէին կամ պարզապէս մի մի իմաստականք պիտի դառնային:

Եւ մեր հեղինակը կ'յայտնէ թէ բնութիւնն օրին մէկը իր պայծառ ճայնով պիտի հաստատէ թէ քանի' թիւր դրութեան մը կ'հետևին մեր համալսարանականները: Երբ երևան գայ, ինչպէս պիտի գայ, յաջորդ սերունդին մէջ որ հանրաին համեստ դպրոցներ, ուր ելբէի կանոնը կ'ուսուցանեն, լաւագոյն կրթական հաստատութիւններ են երկրին հանձարներ և իմացական զերազանցութիւն տալու, և թէ համալսարանները խուժող արք և կանայք ստորին այլ ազատ ուսանողներէ յազութա՛ր պիտի մնան, ահա այն ժամանակ այժմեան մի շատ կրթական ծրագիրներու յիմարութիւններն աչքի պիտի զարնեն և անոնց փոփոխումն իրրև օրուան լուրջ խնդիր մը պիտի կանգնի ամենուն առջև: Անշուշտ կ'երևի որ ամեն բան առաժըմ պիտի շարունակուի առաջուան պէս — համալսարանական ուսանողներ ըստ հաճոյս պիտի քալեն նոյն ճամբան, քանի որ չունին հիմայ միջոցներ, և գործնական մրցակիցներն զեռևս չէ կարելի յառաջ բերել, մինչև որ ստորին վարժարաններէ ուսանողներն ասպարէզ չիջնեն: Կարելի է ապագան գուշակել հոգեբանական և բնախօսական դարերու շնորհիւ, որովհետև կ'տեսնուին մեր առջև իրրև ուղեցոյցներ, դասեր՝ որ բաւական վճուական են քանի որ մարդկային ազգի պատմութեամբ կ'հաստատուին: Այն դարերը մեզ ցոյց կ'տան որ երբ նորարոյս ուղեղ մը անչափս կ'կրթուի, կ'ծերանայ, թէ և տակաւին նորարոյս իսկ հին ուղեղներ երբ չափով մարդուին մեծ մասամբ նոր կ'մնան, մինչդեռ իրենց ամբողջութեան մէջ հին են: Այո՛, ցոյց կ'տան մեզ թէ այն իմացականութիւնն որ ամենէ փայլուն

գործն լոյս կ'հանէ, այն իմացականութիւնն որ ամենէ դժուարին խուզարկութեան կ'նուիրուի, այն իմացականութիւնն որ ամենէ աւելի շուտ և լրջութեամբ դժուարագոյն և ծանրագոյն գործի մը կ'ձեռնարկէ, ճիշտ այն իմացականութիւնն է որ ուսմանց, ընթերցման — գրականութեան և հաշուեգիտութեան տարրներն ունենալով — իրեն յատուկ ազատ և օգտաւէտ ուղղութեան մը մէջ մտած է:

Եւ մեզ ինչ տեսակ դաս կրնան բերել Ռիչարտսընի այս ուշադրութեան արժանի դիտողութիւններն, քանի որ Հայք զուրկ են աղքատին համալսարաններէ, և եթէ կան քստի մը հատանոք ալ օտար վարչութեան ձեռքը կը վարուին: Բայց եթէ մէկ կողմէ չունինք համալսարաններ գէթ ունինք նախակրթարաններ՝ որոնք անհրաժեշտ է՝ չէ թէ լոկ հասցէ յաղնակը տանելու արամադրութեամբ լի ծրագիրներ տալ, և ինքնահաւան իմաստակներ հասցունել, այլ այնպիսի հիմնական ուսմանց և գիտութեանց յայտադիրներ որ մեզ տան հայեր, մարմնով ու մտքով ճշմարիտ մարդեր, կենաց դժուարութեանց առջև անվհատ և աննկուն կանգնելու և մարդկութեան օգտակար լինելու կարող քաղաքացիներ: Աթէ միւս կողմէ չունինք համալսարաններ, ունինք սակայն համալսարանականներ՝ որ մեծ հաշակ կ'աշակեն իրրև դերագանց գիտնականներ Ազգին մէջ. միայն մէնք քիչ մը Սըր Պ. Վ. Ռիչարտսընի կողմը կ'հակինք մի քանի պատճառաւ: Նախ՝ որ աշխարհիս մէջ դեռ ևս համալսարան չ'դառնուած, եկած են ժողովրդեան դասակարգէն հանճարներ թէ գրականութեան և թէ գիտութեան ամեն ճիւղերուն մէջ, որ մարդկային մտաց աննման շարժում մը տուած են: Կործենք թէ մեր Ներսէսներն, Մեսրոպներն ու Մանդակունիներն համալսարանական չ'ին. երկրորդ՝ համալսարանական մարզանքն ընդհանրապէս այնքան կ'բանայ իմացականութեան դրաններն որ սրտի դռներն ի սպառ կ'դոցէ, և կ'ընդունի ինչ որ մաթեմատիքական չափ ու կշիռ ունի, անուապետական վերին և սակայ մթին կամ աշխարհաքաղաքացիութեան մթնոլորտ մը ստեղծելով, որու մէջ կ'մոլորի խուզարկուն և ի զուր կ'իյնտուէ լուսոյ կենդանարար նշոյլներ. երրորդ՝ համալսարանական ուսանողներէն շատեր, շատ գիտուն այլ ոչ իմաստուն, իրենց խորին գիտութեան արդիւնքն իսկոյն ցոյց տալու անհամբեր, առաջին՝ նուիրական պարտ կ'համարին մեր մէջ չէ թէ ժողովրդեան առհմային թերութիւններն ուղղել, այլ անոր պատ-

ժութեան, էութեան հետ զարնուիլ, և բժականդիր քննադատութեան մ'ողջոյն հաւատարիմ մնալու յաւակնութեամբ, քանդել և ամեն նուիրական աւանդութիւններ վեր ի վայր տալալել, առանց անոնց տեղ ուրիշ բան մը դնելու, և անտես առնելով այդ ժողովրդեան կազմական սպայմաններն: Այս կարգի հախալարանականներ անհատական զարգացման արագ ընթացքը կ'չխօթեն ժողովրդային յառաջ իմական շարժումներուն հետ, որ միշտ յամրաքայլ են և զգուշաւոր, և ինչպէս որ իրենք մի քանի տարուան մէջ մութէն ի լոյս ծնած են՝ կործեն թէ՛ ժողովուրդ մ'ալ կարող է անջրպետին մէջ ցատկել և մի քանի տարուան մէջ հախալարանական լինիլ:

ՆՈՐ ԽՆԱՄԱԿԱԼՈՒՅԻՔ

Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՁՄԻՒՆԵՒՈՅ

Շուրջ չորս տարիներէ ի վեր՝ երբ Հոգատար ազգօգուտ ընկերութիւնն՝ իր նիւթական ու բարոյական օժակցութիւնն երկար տարիներ Ս. Հոսիփոս վարժարանի՝ զարգացման նուիրելէ ետք, վտարեկ կ'հրաժարէր իր պաշտօնավարութենէ, աւելորդ է կրկնել թէ ի՛նչ զգալի պարսպ մը կ'թողուր այդ կրթական յարկին մէջ՝ ուր այնքան գործունէութեան արդիւնքներ արտադրեց: Յաւախ՝ երկոյթ, որ դժբաղդարար աւելի ախար տղաւորութիւն մը թողուց ազգին վրայ, երբ նախորդ մուսուլման խորհուրդն զարմանալի անձարակութեամբ աւելորդ սեպեց նոր խնամակալութիւն մը վերակազմելու պէտքն և ինչ որ կար խանդարելու ջանալէն վերջ՝ ողբալի վիճակի մը հասցուց, արդէն յայտնի է, մեր կրթական հաստատութիւնները:

Որ ախարի է այսօր տեսնել, որ լրջամիտ անձերէ բաղլացեալ այժեան Ռուսումն. Խորհուրդն՝ վարժարանաց կրթական ու բարոյական զարգացման նախանձախնդիր, կ'ջանայ վարժարանաց վիճակն բարւոքելու միջոցներ խորհիլ և արդէն մի քանի կարևոր կարգադրութիւններ ընելէ զատ խորհրդակցութեամբ Պ. Տեսչի, արժան կ'գտատէ նաև Ս. Հոսիփոս վարժարանի սանուհեաց և ի մասնաւորի աղքատիկ գասուն անխնամ վիճակին

հոգ տանելու համար, կազմել խնամակալուհի արկնանց ընկերութիւն մը:

Այս կարևոր տնօրէնութիւնն Ս. Առաջնորդ Հօր հաւանութիւնն ստանալով՝ պաշտօնադէս հրաւիրագրեր կ'ուղղուին հետևեալ Ազնիւ արկնանց և օրիորդաց.

Տիկին	Ազապի Կ. Արասլեան
»	Բոյին Ս. Սպարթալեան
Օրիորդ	Զապէլ Սվաղեան
Տիկին	Զարուհի Տ. Աջնան
»	Լիլիա Մ. Մերկերեան
»	Էլանդիա Տքթ. Պ. Կոստանդեան
»	Իսկուհի Յ. Տէր Գասպարեան
»	Լուսի Յ. Արիարեան
Օրիորդ	Հռիփսիմէ Պալասանեան
Տիկին	Մատէն Ղ. Եսայեան
»	Մարիամ Մ. Մամուրեան
Օրիորդ	Մարի Խ. Տամկաճեան
Տիկին	Մերսեռէս Զ. Թաղթաղեան
»	Վերդինէ Տքթ. Ա. Ճէլէպեան
»	Տիրուհի Պ. Եռսուֆ
»	Տուտու Ա. Կոստանդեան

Բացի Տիկին Մ. Մերկերեանէ՝ որ տուած է իր հրաժարականը, նորընտիր անդամուհիք ընդունելով իրենց պաշտօնն Փետրվար 17 էն ի վեր մեծ մասամբ սկսած են զուգարուիլ ի Ս. Հռիփսիմեան վարժարանն և այժաք եղած տնօրէնութիւններն ընելու փութալ:

Խնամակալութիւնն նախ կազմեր է իր ղիւանն, որու անդամուհիներն են.

Արեւնայէր	Տիկին Մատէն Ղ. Եսայեան
Փոխ-Արեւնայէր	» Տիրուհի Պ. Եռսուֆ
Արեւնայէր	Օր. Մարի Խ. Տամկաճեան
Գանչայէր	Տիկին Վերդինէ Տքթ. Ճէլէպեան

Արդարև գովելի է Ասումն. Թորհորդոյ այս ձեռնարկն, որ նստատակ ունի ո՛չ միայն աշակերտուհեաց ձեռնային աշխատութեանց նոր ոյժ և մըլում մը տալ, այլ և զխաւորաբար անոնց բարոյական զաստիարակութեան աւելի փոյթ տանիլ և վար-

ժարանի մաքրութեան, բարեկարգութեան, ինչպէս նաև վարուց և բարուց ուղղութեան վրայ հսկել:

Նորակազմ Խնամակալութիւնն սկսած է արդէն իր մէջ տարեկան նուիրատուութեամբ զումար մը զոյացնելով՝ առայժմ չքաւոր սանուհեաց զրական և այլ պիտոյքն հայթայթելու համար հարկ եղածը տնօրինել և իր մասնակի և խմբովին այցելութեամբ հսկել ու քաջալերել սանուհիներն:

Ազնուասիրտ տիկնանց այս անձնուէր այխատութիւնն և կրթական գործին մասնակցելու սրտաղին փափաքն, արժանի է գովեստի և քաջալերութեան և մի անգամ ևս կ'ապացուցանէ թէ՛ Եզովրի հայ կիներն կ'չարունակէ ոչ միայն իր ընտանի շրջանին, այլ և կրթական ու ընկերական խնդիրներու մէջ իր վերկաւէտ դերն կատարել և զգալ թէ քանի՛ նուիրական է այդ պաշտօնն:

Առ այժմ թերևս սահմանաւոր նկատուին Խնամակալուհի տիկնանց նիւթական ու բարոյական միջոցներն և անմիջապէս նշանաւոր արդիւնք յառաջ բերելու վիճակին մէջ չգտնուի, բայց յուսալի է որ հետզհետէ նորանոր որոշումներ՝ արդիւնաբեր միջոցներ գտնելու օգնեն և աղքատ մանկուոյն պիտոյից լիութի գոհացում տրուի:

Փափաքելի է ուրեմն որ Հայ Հասարակութիւնն և մասնաւոր կարող անհատներ, ի նկատի առնելով վարժարանաց կարոտ վիճակն և Խնամակալուհի տիկնանց դժուարին պաշտօնն, փութան նուիրել իրենց օժանդակութիւնն, որով Խնամակալութիւնն ևս կարենայ ընդարձակել իր բարենպատակ գործունէութեան շրջանակն և վերահաստատել վարժարանի նախկին նախանձելի վիճակն:

ԻՐԱՍ

Թ Ե Մ Ս Լ Ա Ս Ե Գ Ո Ր Ծ Ե Ր

Մ Ա Ղ Ն Ի Ս Ս

Գր Արդւյ թղթակիցն երկարօրէն կ'նկարագրէ Մաղնիսայի թաղական ու կրթական գործերու վիճակն, որ շատ ցաւալի է: Ժողովուրդը կ'ըզգրէ առ Ս. Առաջնորդն, որ կ'զրկէ իբրև քննիչ Տ. Խաչատուր քահանան: Ն. Բ

Թաղական խորհուրդի մը կազմութեան հարկ կոյ, քանի որ հինգ զբեթէ լուծեալ և հրատարակու վիճակի մէջ է: Քննիչ քուստան փոխանակ նոր քուէարկութեամբ նոր, բանիբուն և գործունի անձեր թաղական պաշտօնի կոչել տալու, կ'առարկէ թէ իր ստացած պաշտօնական հրահանգին համեմատ, կ'պարտաւորն հին լուծեալ թաղականը վերակազմել և իրօք կը վերակազմն ու կը մեկնի առանց ժողովրդեան խնդրանաց գոհացում տալու: Լուծեալ թաղականը վերակազմելու համար հարկ չկար քննիչ ուղարկել: Առաջնորդարանի կողմէ պաշտօնական հրամանագիր մը կ'բաւեր կատարելու այդ գործը: Սակայն խնդիրն այդ չէ. խնդիրն՝ ըստ օրինի սյնակիս թաղ խորհուրդ մը կազմել է որ Մաղնիսայի սոգոյին, կրթական, անտեսական և դպրոցական գործերն խնձի մտօք և դիտակցութեամբ կարգի դնէ: Եւ սյակիս թաղական խորհուրդ մը կազմելու համար քուէարկուները պարտին ի բաց թողուլ անն տեսելութեան, կուսակցական նկատում և արժանաւոր, փորձառու, ձեռնհաս անձերու բուէ տան: Եւ միթէ չէն գտնուիր թէ հիներուն և թէ նորերուն մէջ հասարակային գործերու հրամա, գործունի և ընտիր անձեր որ կարող լինին համերաշխութեամբ գործել յօգուտ հասարակութեան:

Անուշտ կան շնտեսակէս Գեք. Առաջնորդին կ'մտայ ի նկատի առնուլ այս կէտն և կարևոր հրահանգներն ուղղել առ օր անկ է նոր ընտրութեան համար, ապա թէ ոչ պիտի շարունակուի այս տարտամ ընթացքն ի Մաղնիսա՝ բարոյական և նիւթական մեծ վնասներ բերելով:

Ն Ա Ղ Ի Լ Ի

Մաղնիսի Աղգոյներ: Թէև բաւական ժամանակէ ի վեր կրթական անգոհացուցիչ վիճակ մ'ունէին, բայց վերջերս շնորհիւ տեղւոյն առաջնորդարգ և ուսեալ կրթասարգներէն, փաստաբան Մեծ. Յովհաննէս Էֆ. Մորենի, այսօր նախանձնի դիրք մը զբաւած են իրենց կրթական երկուստիբուն յարկովը որուն մէջ կը դասախօսեն վերջերս նոր բերուած երկու պաշտօնականներ, զիտակ և վորձառու իրենց գործին: Մորենս Էֆ. իր բաղմազբաղ և սուղ ժամերուն մէկ մասը դարձեալ կրթական գործին է զոհած, Ուրբաթ օրերը շարունակ դպրոց կ'ոյցելէ և բարձմն ալ ուրիշ օրեր, մտէն կը քննէ դպրոցն վիճակը և բաջալեր կը կորոյս թէ ուսուցչաց և թէ ուսանողաց: Գոհունակութեան և գնահատութեան աչ նուաղ արժանի են նաև, տեղոյս պատուաւեր Աղգոյններէն Աղիզեան, Քէշիշեան, Մէյմաբեան և Պղտիկեան էֆէնտիները որ սցի ի բախն կ'օժանդակեն Մորենս էֆէնտիին:

Է. Ա. Մ. Մ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԿՈՒՄԲ

Բարեկենդանի տաթիւ՝ տեղւոյս երոտական ակումբներն սովորութիւն ունին երեկոյթներ տալ և հրաւիրել անդամակից անձեր որոց մէջ կ'գտնուին ազգաւ տարբեր նշանաւոր անհատներ: Այս սովորութեան հետեւելով՝ Արեւելեան Ակումբն այս տարի ևս չորս երեկոյթ տուաւ, որոց վերջինները մեծ հոգակ հանեցին իրենց փայլութեամբ և ոգևորութեամբ, ի շնորհս Պատ. Տնօրէն Խորհրդոյ, որու անդամները՝ Տեարք՝ Արմենակ Կամսարական, Միհրան Բարաղեան, Միսաք Մորուքեան, Յովսէփ Ճեմալեան, Կանխաւ ամեն կարևոր կարգադրութիւններն ի գործ դրած էին, որպէս զի հանդիսին շքեղութիւն և հանդիսականներու հաճոյք և բերկրանք չայլոյթեն: Պարասրահն՝ որ արդէն մասնաւոր նորոգութեամբ աւելի լայնած էր, վայելչապէս զարդարուած և լուսով ողողուած կ'երևէր, մինչդեռ երածը՝ տական ճարտար խումբ մ'իւր վառվառն և սրտատրոփ եղանակներով ի պար կ'հրաւիրէր արդէն պարելու անհամբեր պարմանիներ, կուսաններ ու տիկիներ, որոց բնիկ գեղն ու շնորհալի կերպերն աւելի աչք ու սիրտ կ'գրաւէին քան թէ պերճ արդու զարդն ու ակնախափ շողակներն: Նշանակութեան արժանի երեկոյթն այս է, որ՝ օտարոտի նշոյլներով փայլելու անկարօտ՝ հայացի տարրը միայն կ'տիրէր սոյն երեկոյթներուն մէջ, ուր նոր ու չափաւ և հրատուրելի դէմքեր առաջին անգամ երևելով, կարճես աղնուաղետական գոյն ու չող կ'րերէին՝ ոչ միայն հոտաւէտ միճուորտին, այլ և պարային շարժումներու, մտերմական փոփոտքի և գաղտուգոյլի ակնարկներու որ ոչ նուազ նշանակական էին: Պարերն անընդհատ կ'շարունակուին մինչև ցայգ, մեծարանքն առատօրէն կ'բաշխուի, զուարթութիւնն ու ուրիշ հետզհետէ այնքան կ'աւելնան որ տարից ու պատկասելի հանդիսականներ իսկ կ'փորձուին օղակ կազմել և մասնակից լինիլ ընդհանուր ցնձութեան, մինչդեռ խալու սեղանները, գրեթէ թափուր, այնքան խայթ չեն ընծայեր՝ խաղասէրներուն անգամ:

Այսպէս՝ Արեւելեան Ակումբն՝ որ ի շնորհս լաւ մատակարարութեան, օրէ օր զարգանալու ճամբուն մէջ կ'գտնուի, ի'ջպէս նաև անդամներն աւելցնելու, եթէ բարեկենդանի տաթիւ վայելելու չզրօսանաց վայր մ'է, ոչ նուազ ընթերցանութեան դահլիճ մը և մտերմական յարաբերութեանց կապ մը կ'հանդիսանայ ընդհանրապէս, ուստի և քաջալերութեան և օժանդակութեան արժանի

Լ Ր Ա Ք Ե Ր

ԵՒՐՈՊԱԿԱՆ մեծ տէրութիւններն՝ այս միջոցին՝ անսակ մջ հաւերաշխութեամբ՝ ընկերային անդորրութեան դէմ՝ գինուած տարրները զսպելու կ'ջանան, նոյնպէս պետական անհամեմատ ծախուց հասնելու համար մաքրային, ելմտական՝ և այլ միջոցներ ի գործ կը դնեն եկամտից աղբիւրներ գտնելու, աղբիւրներ՝ որ գլխաւորապէս ժողովրդոց քրտակներն են: Արջ-սպիս ԱՆԳԼԻՅՅ մեծ մարդն քաղաքական տեսարանէն կ'ըջալու ի կամովին: Պ. Կլատտոն՝ աչքի և ականջի տկարութենէ ստալալալ՝ կ'հրաժարի պաշտօնէ, և այսպէս զրեթէ կէս դարէ ի վեր իր երկրին՝ մանաւանդ ընկերային օրէնսդրութեան խնդիրներու մէջ այնքան գերակշիւ դեր մը կատարող հնչակաւոր անձնաւորութիւնն կարծես դատարկութիւն մը կը թողու: Անգլիական աշխարհի մէջ, Արմատականը կը վրդովին երբ կիմանան որ աշխարհ հանձարեղ ծերունին իրեն յաջորդ նշանակեր է լորտ մը, արտաքին գործոց պաշտօնեայն, լորտ Ռոզպէրին, ճիշտ այն սլաշուն որ Լորտերու ժողովին դէմ իր վերջին ճառին մէջ շանթեր արձակած և կոչումն ըրած է իր կուսակիցներուն սեղմել այն աշուտակետական մարմնոյն արտօնութիւններն: Բայց Ռոզպէրի թէև լորտ՝ ազատական կուսակցութեան ճարտար և ազդեցիկ մարդերէն մին է և վրդովեալ միտքերն անդորրելու կը յաջողի իր ծրագրով, որ կը յայտարարէ թէ կառավարութեան մի քանի պաշտօնէից անդամութիւնը քաղաքականութեան փոփոխութիւն չհշանակեր: Ներկայ ամսոյ մէջ Բարլմէնդն իր նստաշրջանն կ'սկսի և գահաճառն կ'ծանուցանէ սովորական չոր ու ցամաք ոճով թէ պաշտօնական յարաբերութիւններն բոլոր տէրութեանց հետ միշտ խաղաղական են, թէ Ռուսիոյ հետ Բաւիրի սահմանադիւր խնդիրը բանակցութեան մէջ է, թէ նաւային զօրութիւնն աւելցնելու ջանքեր պիտի լինին, թէ Իրանտա խաղաղ ու բարեկարգ է եւ: Միւս կողմէ՝ կարևորագոյն խնդիրն էր Կլատտոնեան կուսակցութեան համար՝ նոր վարչապետին ծրագիրն՝ որ կ'խոստանայ լորտերու ժողովին խնդիրն յուզել և անոր իրաւասութեան սահմանն այնպէս գծել որ զազրի ծանրանալ Հասարակոց խորհրդաբա ի սրբումներու վրայ, թէ Իրանտայի ծրագրը նոյնը

պիտի պահէ, թէ Կալէսի եկեղեցին պետական եկեղեցիէն պիտի անջատէ, ինչպէս նաև Սյովտիականն, և թէ այս հիմնական փոփոխութիւններն ընելու համար հարկ կ'համարի նախ իրրև զգուշաւոր և յարգարիշ միջոցներ, մէկ անձի մէկ քուէի միայն իրաւունք տալ, մինչդեռ այժմ որքան բնակարանի այլքան քուէի տէր են մանաւանդ ազնուապետական դաստիարղը, և ի Սյովտիա՝ թաղական և գաւառային ժողովներու հաստատութեան ինչպէս նաև ուրիշ ընկերային խնդիրներու ծրարներ ներկայել Խորհրդարանի: Սակայն Պ. Լապուչերի մի առաջարկն՝ Ուղերձի վիճարանութեան առթիւ՝ երեք քուէի մեծամասնութեամբ ընդունուելով՝ կոիւն արդէն սկսած կ'համարուի Վերին Խորհրդ արանի դէմ: Գաղթային ձախորդութիւնները դարմանելու կ'ջանան Անգլիացիք: Արդէն արևմտեան Ափրիկէի մէջ Մադագասկներու իշխան Լոպէնկուլալի մահուամբ բաւական ընդարձակ երկիրներու կ'տիրանան, մինչդեռ յարևմտեան Ափրիկէ՝ Արաբ ցեղերու զուլս՝ Պոտի Սիլահի դէմ յարձակելով՝ յաղթանակ կ'տանին: ՅՐԱՆՍԱ կզերին հետ հաշտարար ողբով վարուելու քաղաքականութեան կ'հետևի և Կամպէդաի խօսքն թէ — « Կզերայանութիւնն է մեր թշնամին » — բոլորովին գիւղատէճ և ներկայ պարագայից մէջ՝ ուր Ս. Պապն Հանրապետութեան յարած է, անհիմն կ'հաշակէ: Ազգ. ժողովին մէջ Պ. Սերիլէր, կրօնական և կրթական գործոց նախարարն, կ'յորդորէ արևմտականներն խզճի ազատութեան և կրօնական թոյլուութեան սկզբունքն յարգել, խոստանալով հոգևոր իշխանութիւնն պօրովակել միշտ իր սահմանին մէջ: Նաւային Մասնախումբը կ'չարուճայ իր քննութիւնն ի Թուրք: Լորտ Տըֆրինի, Բարիլի անգլիական անուանի դեսպանին, բանախօսութիւնն Անգլիական առևտրական սենեկին տարեկան հացիերոյթին առթիւ, գովութեամբ կ'յիշուի Լորտ Տըֆրին կ'յայտարարէ թէ ցորչափ Ֆանսա և Անգլիա բարեկամ մնան, և պիտի մնան քանի որ այդ երկու ազգեր դարէ մ'ի վեր միշտ հաշտութեամբ և համբախտութեամբ կ'գործեն ամեն արուեստից, գիտութեանց մէջ և իրարու սջակից կ'գանուին ամեն ընկերային և կրթական գործերու մէջ, աշխարհի քաղաքակրթութիւնը պիտի օգտի, հաւասակ այն զիւանագիտական կոիւններու որ կ'պատահին գաղթալին անտրի խնդիրներու առթիւ, և որ շէն կրնար խանգարել ծանր շահերու վրայ հիմնուած յարաբերութիւններ: ԳԵՖՄԱՆԻՅ Ռայխսթակն՝ երկար վիճարանութեանէ ետև՝ կ'ընդու-

նի Ռուսիոյ հետ կնքուած առևտրական զաշնագիրն, որու քազաքական նշանակութիւնն ա՛նկերն է, և Յարն Բեթրգուրիի Գերման դեսպանին տուած պարահանդիսին ներկայ գտնուելով՝ կ'հաստատէ այն կարծիքն թէ՛ Եւրոպական խաղաղութիւնն անվրդով պահելու և թէ՛ իր զրացի տէրութեան հետ բարեկամական յարաբերութիւնները մշակելու տրամադիր կ'գտնուի՝ թէև այս մտաւորութիւնն այնքան հաճելի չլի ուրի Քրանսացուոց:

Լ Ր Ա Ք Ա Ղ

Ազգ Պատրիարքարանի վերաշինութեան, ըստ ոմանց վերանորոգութեան, խորհուրդն գովելի է և դիւանատան թղթերուն Ղալաթիոյ խորհրդարանը փոխադրութեան լուրն կ'հաստատէ վերջապէս որ այդ խորհուրդն պիտի գործադրուի:

Կնդր խառն Ժողովն, որ ի սիգրան մտադիր էր ուղղակի, առանց զաւտուայն ժողովնու մասնակցութեան, կեդրոնէն առաջնորդներ յղել վիճակներն, կ'փոխէ իր որոշումն և ընտրական իրաւունքն յարգելով, միայն Պատրիարքական փոխանորդներ պիտի յղէ այն կողմերն ուր տեղական ընտրութիւնն կարելի չէ կատարել:

Բաղասար Դրամպեան՝ բնիկ Սլէքսանդրոպոլցի 4,500 բուպլի կտակեր է եկեղեցական, կրթական և բարեպաշտական հաստատութեանց:

Պ. Յովհ. Տ. Միրաքեան՝ իզմիրի վարժարանաց նախորդ Տեսուչն ասիպուներ է, ինչպէս որ Տրապիզոնէն կ'իմացնեն, հրաժարել նոյն տեղւոյն երկնու վարժարանաց տեսչութենէ, Գաւառական Ժողովին որոշման համեմատ, մի տարուան համար կնքուած պայմանագրին ուժով 120 ոսկի առնելով: Զարմանալի չէ՝ եթէ Տրապիզոնի ժողովուրդն մի արուան մէջ կարող եղաւ բռնաբերել այդ Տեսչին գործունէութեան ասիճանն, քանի որ բռնաբերուողութիւն ունի, մինչդեռ մեր նախորդ Ուսումն. խորհուրդն կուսակցական հոգւով կուրցած՝ իր սիրական Տեսչին տարին 200 ոսկի թուշակ կ'վճարէր որ մեր վարժարանները քանդէ:

Գարաբաշի Աշխատախրաց ընկերութեան հոգածութեամբ ներկայացում մը տեղի ունեցաւ Մեծրոպեան վարժարանի որահն ի նպատակ այն գիւղի վարդանեան դպրոցի աղքատիկ մանկանց: Թատրախաղն էր Գեւորջի ընտանիքն որ այս անգամ բաւական յաջողութիւն գտաւ: Պ. Ա. Գույումճեան՝ հեղինակն, գլխաւոր դերն ունէր, ինչպէս նաև Տիկին Գոհարիկ կալէա՝ իսկ միւս դերակատարներն էին կրթատէր երիտասարդներ, մինչդեռ յունական Աբալլոն նուագախումբն անձուիրաբար եկած էր խաղին նոր աշխոյժ մը տալ: Աշխատախրաց ընկերութեան անջիւ անդամուհիներն արժանաթեայ ժամացոյց մը նուիրեցին Պ. Գույումճեանի: Հասոյթն 400 մէճիտէն աւելի եղած է:

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

	Դահեկան արժա՛ք
Չատիկ (Վ. օլթէր)	5
Յիւլիան (սպարապետ)	
Միքրո-Մեղաս, Ժան և Քօլէն, Ճերմակ ու Սև (Վ. օլթէր)	4
Վերթէր (Կէօթէ)	8
Մենաստանի աղբիւն (Տ. Պոմոն)	5
Յէվիլի սափրիչը (Պոմարչէ)	5
Գազտնիք Բարիզի (Էօթէն Սիւ) 8 հարոր	96 50
Հազար ու մէկ գիւնդներ	74 50
Երեք Հրացանակիրք (Ա. Տիւմա) 5 »	56
Քսան տարի ետք » » 4 »	46 50
Պրատիւն դերկոմս » » 12 »	115
Ա. Ժօրի » »	16 50
Իվանօէ (Վ. Սքօթ) 5 հարոր	29
Սիմօնեան (***) Աբրայ 4 հարոր	58 25
Ամուրիի մը երազները (Իք. Մարվէլ)	6 50
Աշխարհի շրջանն ու թսուկ օրուան մէջ (Ժ. Վերն)	12 75
Խորհրդուտոր կղզի (Ժ. Վերն) 5 հարոր	28
Մանկուիք (Գանփլէօրի)	9 25
Սիպերիականի մը Յիշատակը	8
Համառօտ պատմ. Բնական գիտութեան (Ա. Պըքլէյ)	10
Մանր վէպեր ու դասեր տղոց համար (սպարապետ)	
Բանալի հայերէն շարագրութեան Բ. դիպ	5
Գիտելիք ու պարտիք տղոց Ե. դիպ	5
Ընդհանուր պատմութիւն համառօտ Մաս Ա.	5
» » » » Բ.	
» » » » Հարոր Բ.	
Առաջին Ընթերցարան	2
Երկրորդ Ընթերցարան Ե. դիպ	2 50
Տունէն դուրս Թարեբարազ	5
Իրարանութիւն Բ. դիպ	5
Առողջարանութիւն աղջկանց համար	5
Արևելեան Մամուլ 25 հարոր (1871-1895)	1242
Արապի կոզդ (Օնէ)	5
Բերուզակ (Փոռպէն)	5
Առանին Տնտեսութիւն	8

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

իզմիրի համար տարեկան արծ. մէծ.	3 1/2
» » վեցամսեայ	2
Կ. Պօլսոյ և այլ երկիրներու համար տարեկ.	4
վեցամսեայ	2 1/2
Աղբ. վարժապետներու համար յիզմիր տարեկ.	2 1/2
դուրսերու համար »	3

ԿԱՆԽԻԿ ԷՆՐԵԼԷ

Ա. Մանուկ հրատարակէ նաև թանուցածներ չափաւոր սլայմաններով:

Ու է նամակ, յօդուած ու դրուած ուղղեալ առ խմբագրութիւն ետ չեն դարձուիր:

Թէև Ա. Մանուկ ունի յատուկ գործակալներ ի Կ. Պոլսու

Մեծ. Նշան Պէրպլերեան

61 ետի Զապրիե. ճարտիտի

և

Մեծ. Յ. Հաննէսեան

Հելլէի խան — Կալաթա

որոյ միջոցաւ կարելի է բաժանորդ դրուիլ և թերթերն ստանալ, սակայն այն բաժանորդներն որ կ'փափաքին ուղղակի ընդունիլ իրենց թերթերն կարող են ղիմել առ խմբագրութիւնս իրենց հասցէն որոշակի նշանակելով և միանդամայն տարեցինն՝ Օսմանեան թղթադրոշմ ուղարկելով:

Մեր հասցէն,

Խմբագրութիւն ԱՐԵՎԵԼԻԱՆ ՄԱՄՈՒԼՅՅ — Իլմիր

Rédaction d'ARÉVELIAN MAMOUL — Smyrne.